

24640

331.88(4)

Ա-11

ՀԱՅԿԱՆԻ ՄԱՍԻՆԻ

ՀԱՅԿԱՆԻ ՄԱՍԻՆԻ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ
ՃԱՐԺՈՒՄՆ
ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ

ՄԱՍԻՆԻ

ՀԱՅԿԱՆԻ

ՅԵՐԵՎԱՆ

1927

19 JAN 2010

Ա. Ս.

331.88(4)

Ա-11
ստ

ՔԱՐԳՄԱՆԵՑ ՅԵՎ ԼՐԱՑՐԵՑ ՀՈՎՀ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ
Շ Ա Ր Ժ ՈՒՄՆ
ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ

(Պատմական աղբյուր)

1003
1926

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Ա. Մ. ԽՈՐՀՐԴԻ № 62.
ՅԵՐԵՎԱՆ—1927

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. 358Ը
ՏԻՐԱԺ 1000.

Ն Ե Ր Ա Մ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Կապիտալիզմի առաջանալը յեվ բանվորական
շարժման սկիզբը Արեվմսյան Ֆեդրալայում

Կապիտալիզմի սաղմերն սկսում են զարգանալ
Ֆեդրալայում՝ մոտ հինգ դար սրանից առաջ: Այս յի-
րևույթին առանձնապես զարկ են տվել հետևյալ հան-
դամանքները. առաջին՝ Ամերիկայի գյուտը (XV
դարում), վորաեղից սկսվեց թանկագին մետաղների
հոսանքը դեպի Ֆեդրալա և յերկրորդ՝ վաղուց անտի-
Արեևիքի հետ (Ասիայի և Աֆրիկայի յերկրներ) ունե-
ցած առևտուրը, վորը յեվրոպացիներին ծանոթացրեց
— շուրջության առարկաների հետ (դրանք են՝ թանկա-
գին գործվածքներ, գորգեր, փղոսկրյա իրեր և այլն):

XVI և XVII-րդ դարերում սկսվեց առևտուրը գա-
ղութների հետ. ավելի ճիշտ ասած՝ գաղութների կո-
լոնիալիզմն ու նրանց բնիկների ստրկացումը:

Այդ առևտուրն անասելիորեն հարստացրեց Հոլ-
լանդիային, Սպանիային և ապա Անգլիային:

Նույն ժամանակամիջոցում, յեվրոպական առան-
ձին յերկրների ներսում զարգանում է առևտուրն ու
արդյունաբերությունը — հատկապես՝ մահուդեղենի,
կտավեղենի, մետաքսի արտադրությունն ու մետաղա-
մշակումը:

Այդ ժամանակաշրջանի կառավարութիւններն արդյունաբերութեան և առևտրի զարգացմանը, բոլոր տեսակի միջոցներով ու արտոնութիւններով զարկ հիշին տալիս, այդ զարգացման մեջ տեսնելով իրենց հզորութեան հնարանը:

Բայց վորքան եւ մեծ չլինեցին տնտեսական ջանքերը և հենց իրենց կապիտալիստների ձգտումները, վորոշ սահմանից դենը չէր կարող անցնել արդյունաբերական զարգացումը. քանի արտադրութեան գործիքները մնում էին նույնը, ինչ հարյուրավոր և հազարավոր տարիներ առաջ կային: Այդ պատճառով, դեռ մինչև XVIII-րդ դարը, արդյունաբերութեանը մընում էր մանր արհեստավորական և տնայնագործական. նույնիսկ խոշոր ձեռնարկներում, ինչպիսիք էին մանուֆակտուրաները, աշխատանքը դեռ ձեռքով էր կատարւում, մեքենայացման չէր յենթարկվել. բոլոր յեկրոպական տնտեսականների բնակչութեան հսկայական մասի գրաւմունքը մինչ XVIII-րդ դարի կիսերը, դեռ յերկրագործութեանն էր:

Մեքենաների գյուտը յեղալի, ամենից առաջ, մանկու և գործելու աշխատանքներում ու հետո միայն լեռնագործութեան, ճանապարհների հաղորդակցութեան և յերկրագործութեան անպարհանելում:

Գյուտերից ամենակարևորը—դա շոգեմեքենան էր, վոր ամեն տեսակի մեքենաների համար հզոր շարժիչ ուժ ստեղծեց. Մեքենան արտադրութեան մեջ մի ամբողջ հեղաշրջում առաջացրեց, իր տեսակի արդյունաբերական հեղափոխութեան:

Նախկին փոքրիկ ձեռնարկութեանների փոխարեն, վորոնց մեջ աշխատում էին արհեստավորները, մեկ-

յերկու քարգահներով կամ տնայնագործները իրենց ընտանիքի անդամներով, սկսեցին առաջ գալ հարյուրավոր ու հազարավոր բանվորներ ունեցող ֆաբրիկաներ և գործարաններ:

Մեքենաների արտադրած մթերքների եփանացումն այն տեղը հասցրեց, վոր արհեստավորների և տնայնագործների (մանողներ, ջուհակներ) ձեռքի աշխատանքը բոլորովին ընկալ, անարժեք դարձալ:

Մեքենան քայքայեց հսկա թվով աշխատավորներին, վորոնք իրենց ձեռքի աշխատանքով տանելի ու բավարար ապրուստ ունեցին: Նախկին փոքր թաղամասերը վերածվեցին խոշոր գործարանային բաղաքների, վորտեղ ծնվեց ու աճեց մինչ այդ չեղած հասարակական մի նոր դասակարգ—գործարանային պրոլետարիատը:

Վորովհետև գործարանային բանվորութեան աշխատանքը յերկարատեւ վարժութեան չէր պահանջում, դրա համար ցած էին վարձատրում և գործարանների տղամարդկանց հաճախ փոխարինում էին կանանցով ու յերեխաներով: Բանվորների մեծամասնութեանն ստանում էր «ոռլած» աշխատավարձ և վոր ամենավատթարն էր, ընտելութեան մասսայորեն տանջւում էին մինչ այդ չտեսնված աղետից—գործազրկութեանը:

Այդ աղետը, վոր մեքենայական արտադրութեան հետեանքն էր, բոլոր յեկրոպական յերկրների բանվորութեան մեջ առաջացրեց հուզումներ և խռովութեաններ:

Բանվորները, ամենից առաջ, մեքենաների վրա էլին թափում իրենց ցասումը: Աշխատանքից զրկւած նախկին ինքնուրույն արհեստավորներն ու տնայնա-

գործները հարձակվում էին դործարանների վրա, շարժում էին մեքենաները, հրդեհում շենքերը և հաճախ ել սպանում էին ձեռնարկատերերին:

Կ ո ի վ ը մ ե ք ե ն ա ն ե ռ ի դ ե մ, պարզ է, վոր պրոլետարական պայքարի խելոք ու նպատակահարմար ձևը չէր: Բանվորների թշվառություն մեքենաները, բնավ, մեղք չունեին. ընդհակառակը, մեքենան այն բարենպաստ ուժն էր, վոր կոչված էր դյուրացնելու և արդյունավետ դարձնելու բանվորի աշխատանքը: Հանցագործը՝ դա կապիտալիստական հասարակարգն էր, վոր բոլոր մեքենաները սեփականություն էր դարձրել անսիրտ շահագործողների, վորոնք բանվորներին անասունի տեղ էին դնում և աշխատում էին, վորքան կարելի չէ շատ վատապաշտել: Դրա համար ել, կռիվը մեքենաների դեմ, բանվորներին չէր կարող վերեն բան տալ, բացի սոսկալի պատիժներից ու անասնման աղքատությունից:

Բանվորները շուտով ըմբռնեցին բռնկումները և ապստամբությունների անդուլտ լինելն ու անցան պայքարի պրոլետարական միջոցների նպատակահարմար ձևերին՝ ընդդեմ կապիտալի և կապիտալիստական հասարակարգի:

Յեկոպայի տարբեր յերկրներում սկսվում է պրոլետարիատի յեղույթներն ընդդեմ կապիտալիզմի և այսպիսով սկսվում է բ ա ն վ ո ռ ա կ ա ն շ ա ր-
ժ ու մ ը:

ԳԼՈՒԽ 1.

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ ԱՆԳԼԵԱՅՈՒՄ XIX ԴԱՐՈՒՄ

1. Անգլիական բանվորության սնեհական պայքար XIX-րդ դարի սուսցին կիսերում

Բանվորական շարժումն Անգլիայում ավելի շուտ է սկսվել, քան մյուս յերկրներում, վորովհետե Անգլիան ամենից առաջ է թեակոխել կապիտալիստական դարգացման ուղին:

Մեքենաների դյուարը, վոր այդ դարգացման պատճառն էր, ամենից առաջ սկսվեց Անգլիայում և հենց այդտեղ էր, վոր ամենից վաղ քան վերեն տեղ, յերևան յեկան վեր հիշված թշվառությունները, վորոնք բանվորությունը հրեցին դեպի կատաղի կռիվ կապիտալի դեմ:

Յեթև մենք նայենք XIX-րդ դարի առաջին կեսերի անգլիական բանվորական շարժմանը, նրանում կը նկատենք յերկու ուղղություն՝ տնտեսական և քաղաքական:

Բանվորությունը, ինչպես և ամեն որ, կսկսվում էր մեքենաների դեմ, գործադուլներ էր տնում, գաղտնի պրոֆուրթյուններ կազմակերպում, պայքարում միությունների ազատություն համար, վորքեք անում ըս-

պատողական և արտադրողական ընկերությաններին միջոցով իր դրությունը բարելավելու:

Միևնույն ժամանակ բանվորությունը նևաժում էր նույնպես քաղաքական պայքարի, ձգտելով տիրապետել կառավարությանը և փոխել իշխող քաղաքական ու սոցիալական կարգերը:

Անգլիայի բանվոր դասակարգի քաղաքական պայքարը XIX-րդ դարի առաջին կեսերում, ինչպես տեսնում եք, անգլիական բանվորական շարժման պատմության ամենահատաքրքիր գլուխներից մեկն է:

Կռիվը մեքենաների դեմ (մեքենաների ջարդելը, գործարանների ավերումը) Անգլիայում ավելի կատաղի բնույթ ուներ, քան վորեկ այլ յերկրում, վորովհետև այնտեղ արդյունաբերական հեղաշրջումն ավելի սուր ու հիվանդագին ընթացք ուներ, քան վորեկ տեղ:

Մեքենաներ ջարդելու համար կազմակերպվել են նույնիսկ «լեդիաների» գաղտնի ընկերություն (ինչպես յենթադրում են, լեդիաներ կյին կոչվում իրենց ղեկավար Լեդգիի անունով):

Կառավարությունը բանվորներին նման յելույթներին ծանր պատիժներով էր պատասխանում և շարժման ղեկավարներին յենթարկում էր մահվան պատժի:

Մեքենաների դեմ յեղած կռիվն հետ միաժամանակ, սկսվում է անասելի գործադուլային շարժում: Բանվորական շարժման սկզբնական շրջանի գործադուլները կոչվում էին «սուլ», վորովհետև բանվորները գործադուլ անելիս, իրենց կանանց և յերեխաներին սովի կյին դատապարտում, չե վոր նրանք չունեյին վորեկ տնտեսած բան կամ փոխադարձ ոգնության կազմակերպություններ:

Այս հանգամանքը, այսինքն գործադուլափորենքին և գործադուլիներին ոգնելու համար դրամական միջոցների անհրաժեշտությունը, նշանակալից չափերով նպաստեցին պրոֆմիությունների անելիքներին — տրեկ-յունիսն կազմակերպելու գործին:

Արհեստավորների քարգահների և այլ բանվորության միավորումները փոխոգնության նպատակներով, անհիշելի ժամանակներից ի վեր գոյություն ունեյին Անգլիայում:

1799 թվականներին, բանվորության շարունակական ապստամբությունների ու հուղումների հետեանքով, միությունները արգելվեցին: Այն ժամանակ բանվորությունը սկսեց կազմակերպել գ ա գ տ ն ի մ ի ու թ յ ու ն ն էր: Նման միություններն ավելի համառ ու խիզախորեն կյին պայքարում. դրա համար էր, վոր նրանց անդամներին խիստ պատիժների կյին յենթարկում:

Բուրժուազիայի ավելի զարգացած, առաջավոր մասը տեսնում էր, վոր յերկու կողմերի համար էլ ավելի ձեռնտու յե (վոչ միայն բանվորության, այլև ձեռնարկատերերի) բանվորական շարժումը որենքի շրջանակի մեջ գնել: Դրա համար էր, վոր այսպես կոչված ռադիկալները (քիչ թե շատ ձախ լիբերալներ) աջակցում էյին պարլամենտին 1824—25 թվականներին մ ի ու թ յ ու ն ն էր ի ա գ ա տ ու թ յ ա ն ուր է ն ք ն անցկացնելու:

Այդ որենքը հրատարակելու ժամանակից ի վեր սկսվում է պրոֆեսիոնալ շարժման արագ զարգացումը:

Բանվորության մեջ ամրանում է այն համոզումը, վոր միավորումները զարկ կաան կապիտալի լծից ազատագրման մեծ գործին:

Այս գաղափարների տարածմանը մեծապես աջակցում են ովքեր իստան երբ կամ Ռորերտ Ռուվենի հետևորդները:

Ռորերտ Ռուվենը (տպրում էր 1771—1858 թվականներին շրջանում) կապիտալիզմի կործանման և կոմունիզմի հիմնադրման ամենատառջին քարոզիչներից է:

Բայց նա յինթադրում էր, վոր կոմունիզմը կարելի չի հաստատել խաղաղ ձանապարհներով: Սկզբում նա փորձում էր համոզել Անգլիայի տիրող դասակարգին (կապիտալիստներին և խոշոր հողատերերին) և պարլամենտին, վոր կոմունիզմը շատ առավելութուններ ունի և ձեռնուռ չի, բայց այս փորձերն անհաջող անցան: Այդ ժամանակ Ռորերտ Ռուենը սկսեց բանվորութանը քարոզել և կոչ անել, վոր միավորումներ կազմակերպեն: Նրա քարոզների վերջնական նպատակը կոմունիստական հասարակութուն հիմնելն էր, բայց մինչ կոմունիզմին անցնելը Ռորերտ Ռուենը խորհուրդ էր տալիս բանվորներին կազմակերպել ըսպառողական և արտադրական ընկերություններ և փոխանակման բանկեր: Նա յինթադրում էր, վոր այդպիսով բանվորությունը կազատագրվի կապիտալի շահագործումից և առանց փողի չիլ յոլա կգնա, իր կոոպերատիվ բանկերում անմիջորեն ապրանքը ապրանքի հետ փոխանակելով: Չնայած Ռուվենը կապիտալիստական հասարակության վերափոխման նպատակին չհասավ, բայց նա մեծապես ոժանդակեց պրոֆեսիոնալ շարժման պարզացմանը և հիմք դրեց կոոպերացիային: Անգլիայում, վորտեղից և վերջինս տարածվեց ամբողջ Յեկտորայում:

2. Անգլիական բանվորության փառափառն պայքարը XIX-րդ դարի առաջին կիսերին: Մանակցությունը քննական իրավունքի բարեփոխման պայքարում

Այն ժամանակամիջոցում յերբ վերը հիշված շարժումներն էլին տեղի ունենում բանվորության մեջ, Անգլիայում միաժամանակ սկսվում և պայքար նաեքաղաքական հողի վրա: Այդ պայքարն սկսեց անգլիական բուրժուազիայի առաջավոր մասը և իր կողմը քաշեց բանվորությունը: Պայքարի նպատակն էր պարլամենտի ընտրական իրավունքները փոխել աճյակս, վոր ժողովրդի ավելի լայն շրջանները մուտք ունենան պարլամենտ:

Արմատականները (ադիկալները) բանվորությանն ապացուցում էլին, վոր մուտք գործելով պարլամենտ, նրանք հնարավորություն կունենան որենադրության վրա ազդել և այսպիսով աջակցել պրոլետարիատի էյանքի բարելավմանը: Այդ ժամանակ արմատականներին բնավ զեվար չէր իր կողմը դրավել բանվորներին, վորոնք իրենց ապրուստի ծանր պայմաններում միանգամայն հեղափոխականորեն էլին արմատադրված:

Անգլիայում վաղուց ի վեր կար պարլամենտ, վորը կազմված էր (և ներկայումս էլ նույնն է) յերկու պալատներից՝ վերին և ներքին: Վերին պալատում (լորդերի պալատ) նիստեր էլին ունենում թագավորի կողմից նշանակված բարձր ազնվականության և խոշոր հողատերերի ներկայացուցիչները: Այժմ էլ նույն դրությունն է: Իսկ ստորին պալատում (համայնքների պալատ), չնայած նա կազմված է ընտրվի պատգո-

մալարներին, ընտրական իրավունք ունեյին առավելապես ազնվականներն ու հարուստները. այդ պալատն էլ միանգամայն անմատչելի յեր միջին և մանր բուրժուազիայի ներկայացուցիչների համար, ել հւր մնաց բանվորութունն ու գյուղացիութունը:

Ընտրական իրավունքի բարեփոխման համար յեղած պայքարը, վոր սկսեցին արմատականները և վորին աջակցում եր բանվորութիւնը՝ տեկց մի քանի տասնյակ տարի: Այդ պայքարն առանձնապէս սուր բնույթ ստացավ 1820—32 թվականներին: Յերկարատե և համառ գործադուլներ եյին լինում, վորոնց ժամանակ խոշոր, բազմամարդ միտինգներ եյին տեղի ունենում. հաճախ ել հակայական ցույցեր եյին լինում, վորոնք վերջանում եյին արյունալի ընդհանր ու մեն եր ու վ ո ռ ք ի և վ ո ս տ ի կ ա ն ու թ յ ա ն հ ե տ:

Յերկար ժամանակ պետութիւնը չեր ցանկանում զիջել, և միայն 1832 թվին, տեսնելով, վոր շարժումը հեղափոխական բնույթ և ստանում, «շնորհեց» մի ուրեք, ընտրական իրավունքների ընդլայնման մասին: Այդ օրէնքն ամբողջովին հոգուտ միջակ և մասամբ ել մանր բուրժուազիային ծառայեց. բանվորութիւնը բընավ վոչինչ չստացավ:

Բայց վոտք դնելով քաղաքական պայքարի ուղին, բանվորութիւնը կանգ չառավ, շատ շուտով սկսեց կռիվը բանվորութեան և տիրող դասակարգի միջև, վորը գնալով հակայական թափ ստացավ:

Այսպիսով սկիզբ առավ մի մեծ շարժում, վորն Անգլիայի բանվորական շարժման մեջ հայտնի յե չ ա բ տ ի զ մ տ ն ու ն ո վ:

«Չարտիզմ» կոչումը ծագել և անգլերեն «չարտեր» բառից, վոր նշանակում և քարտիա կամ խշնդրագիր, վորովհետեւ բանվորութեան պահանջները զբըված եյին «ժողովրդական քարտիայի» մեջ և ամփոփված եյին 6 կետերում: Այդ պահանջները նպատակ ունեյին դեմոկրատացման յենթարկել պետական կարգը. այսինքն՝ նրան այնպիսի փոփոխման յենթարկել, վոր բոլոր քաղաքացիները մուտք ունենան իշխանութեան մեջ:

Առաջավոր բանվորները և նրանց զեկավորներն իշխանութեանը տիրապետելու հարցին նայում եյին իրրե մի միջոցի վրա, վորով միայն հնարավոր և չահագործման և կեղեքման կարգերը վերացնել ու հիմնել մի նոր, արդարացի տնտեսական կարգ:

Պայքարը տեկց 12 տարի (1838—1850), յերբեմնակի ընդունելով իսկական քաղաքացիական կռիւթ բնույթ:

Չարտիստական շարժման մեջ միտանալանութիւն չկար, գործելակերպի (տակտիկա) հարցերի վերաբերյալ անհամաձայնութիւն եր տիրում: (Միաբանութիւն չկար այն հարցի վերաբերյալ, թե ինչ ձևով, ինչ միջոցներով պիտի իրագործել առաջագրած նպատակները):

Բանվորութեան մի մասը, նախկին աստղծագործ Լովետտի գլխավորութեամբ, կողմնակից եր խ ա ղ ա ղ մ ի ջ ո ց ն եր ո վ պայքարելուն: Դրանք այն բանվորներն եյին, վոր աշխատում եյին այնպիսի տրտաղրական ճյուղերում, վորտեղ աշխատավորքը բռնական բարձր եր:

կովետառը և նրա պես մյուս զեկավարները, առաջարկում էին բավականապես պայքարի այսպես կոչված «սահմանադրական միջոցներով», այսինքն գուրս չգալ սահմանված որենքների շրջանակներից: Այդպիսի միջոցներն այն ժամանակ հետեյալներն էին՝ ագիտացիա միտինգների և լրագրության միջոցով, ժողովրդական լայն մասսաների կողմից պարլամենտին պետիցիաների (խնդրագրեր) տալը:

Բանվորության մյուս մասը, գուտ գործարանային բանվորությունը, վոր դեռ լավ չէր կազմակերպված և ցածր աշխատավարձ էր ստանում (գլխավորապես ջուլհակներն ու մանողները) իրենց անվանում էին Ֆիզիքական ուժի կուսակցություն և պահանջ էին դնում հեղափոխական միջոցներով կռվել: Դրանց զեկավարում էին իրլանդացիներ՝ Ո'Կոննորը և Ո'Բրայենը:

«Սաղաղ միջոցների» կուսակցությունը, չնայած բանվորության մեջ ավելի քիչ կողմնակիցներ ունեւր, բայց նրա տրամադրության տակ կար մեծ թվով պրոպագանդիստներ ու ագիտատորներ. դրա համար էլ շարժման մեջ նա հաղթանակեց:

«Սաղաղ միջոցների» կուսակցությունը պետիցիաներ կազմելու և պարլամենտին ներկայացնելու վրա ավելի մեծ հույս էր դնում, մեծապես յեռանդ թափում, քան թե գլնված ապստամբությունների կազմակերպման վրա: Հենց այդ պատճառով էր, վոր մի շարք ապստամբություններ, վոր բռնկվեցին չարտիստների 12 տարվա պայքարի ընթացքում, հեշտությամբ ճնշվում էին:

Այդ պետիցիաներից յերեքն են ներկայացվել

պարլամենտ. դրանցից յերկրորդ պետիցիայի տակ կար 3.315.752 ստորագրություն: Կապիտալիստներն ու հողատերերը, վոր բազմած էին պարլամենտում, հրհռոցով ու ծաղրով էին լսում այդ խնդրագրերը, վորոնցով բանվորները (չարտիստները) խնդրում էին նրանց հեռանալ իշխանությունից և պետության ղեկը զիջել ժողովրդին:

Յերրորդ խնդրագրերը տրվեց 1848 թվին, Ծրանախյում բռնկված հեղափոխությունից հետո. չարտիստների զեկավարներն իրենց կոչեում բոլորին հայտարարում էին, վոր յիթե կառավարությունն այս անգամ էլ մերժի, իրենք գրոհով կմտնեն պարլամենտ: Կառավարությունը չվախեցավ. նա «սեփականության ու կարգի» պաշտպանության համար ոգնության կանչեց բուրժուազիային, վորը 170.000-անոց կամավորական մի բանակ տրամադրեց կառավարությանը:

Չարտիզմը այդ վերջին պարտությունից հետո, այլևս չկարողացավ վոտքի կանգնել:

4. Տրեդ-յունիոնիզմի ժաւանակաւաւաւը

XIX-րդ դարի կիսերից անգլիական բանվորական շարժման մեջ սկսվում է մի շրջան, վոր կոչվում է տրեդ-յունիոնիզմի շրջան. այդ շրջանը վորոջ փոփոխություններով շարունակվել է մինչ 1914—18 թվականների պատերազմը, վորից հետո անգլիական բանվորական շարժման մեջ, ինչպես կտեսնենք ստորև, աչքի յե ընկնում նշանակալից ձախացում:

«Տրեդ-յունիոն» անգլերեն նշանակում է պրոֆմիություն. տրեդ-յունիոնիզմը, դա մի ուղղություն է

յեղել, վոր պրոֆեսիոնալ-տնտեսական պայքարը գերազանցել է քաղաքականին: Անգլիական բանվորական շահժման այս հետադարձան պատճառը հետեւյալն ե-

XIX-րդ դարի կիսերից Անգլիայի արդյունագործությունն ու տնտեսւոյն այնպիսի զարգացման են հասնում, վոր Յեւրոպայի վոչ մի պետութիւն չի կարողանում մրցել Անգլիայի հետ: Այս հանգամանքին առանձնապէս զարկ տվին նորագոյն կատարելագործված տեխնիկան և վորի շնորհիվ ևլ զարգացավ խոշոր արդյունագործութիւնը. յերկրորդ՝ հսկայական գաղութային շուկաների տիրապետելը, վոր հում նյութերի մեծամեծ պաշարներ տվեց Անգլիային և յերրորդ՝ առևտրական նավատորմի ընդարձակումն ու կատարելագործումը, վոր հնարավորութիւն տվեց անգլիական ապրանքն արագորեն և եժան կերպով փոխադրելու յերկրագնդի բոլոր կողմերը:

Արդյունագործութեան ծաղկման հետևանքով, պարզ է, վոր կապիտալիստների վաստակը մեծապէս շատացավ: Զեռնարկողների արագորեն հարստանալը և արտագործիւյան ընդարձակման հետևանքով, բանվորական ձեռքերի պահանջի աճումը, բանվորութեան զրուծեան բարեկամման հնարավորութիւնն ստեղծեց:

Բայց սա չի նշանակում, վոր ձեռնարկատերերն ինքնակամ կերպով ընդառաջեցին բանվորութեան կարեքներին:

Առաջվա նման բանվորութիւնն իր կյանքի բարելավումը ձգտում էր գործադուլների միջոցով. այդ գործադուլները պաշտպանվում էին պրոֆմիութիւնների կողմից և պիտի ասել, վոր ավելի հաջողակ էլին:

Բանվորութիւնն արդեն նկատել էր, վոր այն

1903
1996

դեպքերում, յիր իրենց միութիւնն ավելի լավ է կազմակերպված և գործադուլը տանելու դրամական միջոցներ ունի, հենց իրենք ձեռնարկատերերը չեն թողնում, վոր բանը կատարի կովին հասնի, պատրաստ են դիմումներ անել: Մյուս կողմից ևլ, վորովհետև արդյունագործութիւնը ծաղկման, զարգացման մեջ է, ձեռնարկատերերը շահագրգռված էին խուսափել արդյունագործութեան յերկար ընդամիջումից, վորպիսի հանգամանքը չէր թույլ տալիս պատվերները ժամանակին կատարել և սպառնում էր խոշոր ֆաբրիկների մեջ զցել ձեռնարկատիրոջը: Այսպիսով, ձեռնարկատերերի վորոշ խավի մեջ այն համոզումն և առաջանում, վոր լավ է գործ ունենալ կազմակերպված բանվորութեան հետ, վորը հակված է կոնֆլիկտները խաղաղութեամբ լուծել, քան թե գործ ունենալ անկազմակերպ մասնայի հետ, վորը հեղափոխականորեն է տրամադրված:

Այս ժամանակաշրջանում (1850—1890) առաջացած պրոֆմիութիւններն աչքի էլին ընկնում այնպիսի առանձին հատկութիւններով, վորոնք խոշոր ազդեցութիւն ունեցան Անգլիայի պրոֆշարժման հետագա զարգացման վրա: Այդ միութիւնների նպատակն էր իրենց անդամներին ցույց տալ ամեն տեսակի փոխադարձ ոգնութիւն (սրանք ապահովագրական նպատակներ են) և պաշտպանել իրենց անդամների աշխատանքային շահերը՝ տերերից (ամենից առաջ—գործադուլային պայքարի միջոցով):

Բայց վորովհետև այս նպատակների իրագործման համար անհրաժեշտ էին խոշոր գումարներ (պահեստի զբաղակալութիւն), այդ պատճառով ևլ ամենից ա-

առաջ միություններն առաջանում են այսպես կոչված «սովորած» (վորակյալ) բանվորության մեջ. պարզ է, վոր վորակյալ բանվորներն ստանալով համեմատաբար բարձր աշխատավարձ, նրանք եյին, վոր հնարավորություն պիտի ունենային մոծեկու պրոֆմիությունները, նշանակալից չափով, բարձր անդամավճարներ:

Այդ միությունների կանոնադրություններն անդամագրվողից պահանջում են՝ շատ թե քիչ յերկարատե ստաժ ե վորոշ կվալիֆիկացիա (վորակ): Այսպիսով այդ միություններում կազմակերպվում եր աշխատանքի, այսպես կոչված, «արխատկրատիան»:

Յերկրորդ. այդ միությունները կառուցված եյին նեղ-համբյարային (ցեխային) և տեղական հիմքերի վրա. ճիշտ է, կար նաև տեղի միությունների միավորում, վոր ընդգրկում եր վորոշ շրջանի կամ նույնիսկ ամբողջ յերկրի մի վորեւ կատեգորիայի բանվորներին, բայց մեծ մասով ամեն տեղ ցիրուցան տեղական միություններն եյին իշխում:

Յերրորդ. այդ շրջանի միությունները խստորեն խուսափում եյին քաղաքականությունից. միությունների մեծամասնությունը բոլորովին դեն է շարտում քաղաքական խնդիրները:

Ահա այս յերեք պատճառների հետեանքով այն ժամանակվա միություններում զարգանում է նեղ-մտությունը, և նրանք շահագրգռվում են միայն իրենց միության անդամով, պաշտպանում են իրենց միության անդամի շահերը՝ հաճախ ի վնաս ուրիշների:

Ինչ վերն ասացինք, այս ժամանակաշրջանում, արդյունադործության ծաղկումը բերում եր բանվոր-

ության դրության բարվորում: Այս ժամանակավոր դրությունը, յերբ թվում եր թե ձեռնարկատերերի և բանվորների շահերը զուգահիշում են, բանվորական ղեկավար շրջաններում սկսում է զարգանալ այն տեսությունը, վոր քարոզում եյին բուրժուական տնտեսագետները, շահերի հարմունիայի տեսությունը, վորի համաձայն ձեռնարկատերերի և բանվորների շահերի միջև փոխադարձ համաձայնություն, նմանություն կա:

Այս տեսությունը ձգտում եր բանվորներին համոզել, վոր հնարավոր է և շատ ել ոգտակար, բուրժուազիայի և պրոլետարիատի գառակարգային շահերի հաշտեցում ստեղծել:

Այս տեսակետի հետեանքով է, վոր աշխատավարձի մի նոր ձև է առաջանում, այսպես կոչված շարժական (կամ սահող) սկալան: «Շարժական սկալան» մի միջոց է, վոր հիմնված է այն կանոնի վրա, վորն ասում է, թե շուկայում դրության վավացման, ուրեմն և կապիտալիստի վաստակի շատացման հետ միասին, պետք է բարձրանա նաև բանվորի աշխատավարձը և ընդհակառակը, կապիտալիստի վաստակը նվազելու հետ պետք է իջնի նաև բանվորի աշխատավարձը: Շարժական սկալայի կիրառումը 70-ական թվականների վերջերում, շատ արտադրական ճյուղերում այն տեղը հասցրեց, վոր 80-ական թվականներին, տնտեսական կրիզիսից հետո, բանվորությունը շատ վատ վիճակում եր. շատ զոհողություններից հետո միայն հաջողվեց ընկած աշխատավարձը նորից մինիմալ չափի հասցնել, վորից դենն ել հնար չկար:

Կոնֆլիկտները խաղաղ միջոցներով լուծելու ձգտումը, պարզ ե, վոր պիտի ստեղծեր մի ջնոք դատարաններ, հաշտարատարացաներ՝ պարտաւ հիմունքներով. այսինքն հաւասար թվով ներկայացուցիչներ թե տերերից և թե բանվորներից:

Այսպիսի մի նպատակի պիտի ծառայեր նաեւ արեւ-յուսիսային պարլամենտում, վորն ամբողջովին կազմւած էր խոշոր կապիտալի և խոշոր հողատիրութեան ներկայացուցիչներից (կամ ավելի ճիշտ պարլամենտի նախասնայակներում), բանվորների կարիքներէ բաւարարման մասին:

Բայց այս սխալ տեսակետը չէ նշանակում, թե անգլիական բանվորները յեթե ցանկանային, չէին կարող իրենց հարազատ ներկայացուցիչներն ունենալ պարլամենտում: Այդ ժամանակվա ընտրական իրավունքը, շնորհիւ 1867 և 1884 թվականներէ բարեփոխութեաններին, լայն բանվորական շրջաններին ընտրելու հնարավորութեան եր տալիս. բայց ղեկավարների վերը հիշված սխալ տեսակետների հետեանքով բանվորութեան անհրաժեշտ չէր գտնում իր քաղաքական կուսակցութեան ստեղծել: Հետո, պիտի տեսնուէր վոր բանվորական միջավայրում նման տեսակետներէ տարածմանը մեծապէս նպաստում եր նաեւ Անգլիայի քաղաքական կյանքը:

Վաղուց ի վեր անգլիական պարլամենտում պայքարում էին յերկու կուսակցութեաններ՝ տորիները—կոնսերւատորներ (հետադիմականներ) և վերը երը—լիբերալները. առաջինները պաշտպանում է-

ին առավելապէս խոշոր հողատերերի շահերը, իսկ յերկրորդները գլխավորապէս խոշոր արդյունաբերողների շահերը: Այս յերկու կուսակցութեաններից ամեն մեկը չցանկանալով, վոր բանվորութեանն ու արհեստավորութեանը ձայները շահին ընտրութեանների համար, պետութեան գլուխը յեղած ժամանակ զանազան գիշումներ եր սնում աշխատավոր դասին:

Այսպիսով, անգլիական բանվորութեան ղեկավարների գլխում այն համոզումն եր նստել, վոր անգլիական բանվորները կարող են յոյա գնալ առանց սեփական կուսակցութեան և վոր բավական ե մի թեթեւ սեղմել այս կամ այն կուսակցութեանը, վորպէսզի ձեռք բերվի այս կամ այն բարեփոխութեանը, ուրեմն ո՛րիշ անելիք չկա, բացի արեւ-յուսիսայինների ցանցի ընդլայնացումն ու ամրապնդումը:

Այսպիսով, քայլ առ քայլ, XIX-րդ դարի յերկրորդ կիսերին, անգլիական բանվորական շարժման մեջ ծավալվում ե մանր գործերով զբաղվելու և կամայ-կամայ, աստիճանաբար առաջ գնալու տեսութեանը (թեորիան), մի տեսութեան, ըստ վորի սիւրահոժար կոմպրոմիսների (զիջումների) ու դատակարգների հաշտեցման միջոցով պիտի գործել, ղեկավարվել բուրժուական անտեսագետների բարոյական ուսմունքով և բնավ կարիք չզգալ ինքնուրույն քաղաքականութեան (ուր անց թե հեղափոխական քաղաքականութեան), չպայքարել բանվորական շարժման վերջնական նպատակի, այն է՝ կապիտալիզմի տալալման և սոցիալիզմի հաստատու համար:

XIX-րդ դարի վերջերին Անգլիայի գրութեանը համաշխարհային շուկայում նշանակալիորեն փոխվում

և. սրա հետ միասին վաթճարանում և նաև պրոֆես-
տորիատի դրությունը, անորակ բանվորությունն
ըմբռնում և կազմակերպվելու պահանջ, հող և ստեղծ-
վում սոցիալիզմի պրոպագանդի համար. այսպիսով
անգլիական բանվորական շարժումը թևակոխում և
զարգացման մի նոր շրջան: Այդ մասին հետո կ'առա-
մենք. այժմ անցնենք Ֆրանսիայի բանվորական շարժ-
մանը XIX-րդ դարի առաջին յերեք-քառորդի շրջանին:

ԳԼՈՒԽ II.

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐժՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ XIX-րդ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՅԵՐԵԲ-ՔԱՌՈՐԴՈՒՄ

1. Մանր-բուրժուական հեղափոխությունը յեվ ուսուպիսական (վերացական) սոցիալիզմ

XIX-րդ դարի Ֆրանսիական բանվորական շար-
ժումը նշանակալիորեն տարբերվում և անգլիականից:
Այն ժամանակ, յերբ այդ շրջանի անգլիական բանվո-
րական շարժումը կրում և առավելապես պրոֆեսիո-
նալ-տնտեսական բնույթ, Ֆրանսիական բանվորական
շարժման մեջ գերիշխում և հեղափոխական-քաղաքա-
կան կողմը: Ճիշտ և, մինչ XIX-րդ դարի կիսերը մենք
անգլիական բանվորական շարժման մեջ նշեցինք ու-
ժեղ հեղափոխական-քաղաքական գիծ, բայց և այն-
պես, հիշված ժամանակամիջոցում պրոֆեսիոնալ-տն-
տեսական պայքարը, խաղաղ միջոցներով պայքարելը
նույնպես զարգացած էր: Այսպիսի (խաղաղ միջոցնե-
րով պայքարելու) շրջանում չէր միթե, վոր տեղի ե-
լին ունենում «սոված» գործադուլները, գոյություն
ուճեյին գաղտնի տրեդ-յունիոններ, պայքար եր մըդ-
վում միությունների ազատության համար (պարլա-
մենտի անդամ բարյացակամ լիբերալներին աջակցու-
թյամբ), հետո. միթե նույն (խաղաղ միջոցներով

պաշքարելու) շրջանում չեր, վոր տարածվեց ուղենիզմը, յերբ բանվորները ձգտում էին իրենց գրությունը բարեկամել՝ կոոպերացիայի, փոխանակային բանկերի միջոցով և միաժամանակ ել անընդհատ կերպով առաջ՝ և տարվում պրոֆմիտիշյունների աշխատանքը և պաշքարն ութժամյա բանվորական որվա համար:

Նույնիսկ չարտիզմի շրջանում մեծ մասամբ հաղթող դուրս չեկավ «խաղաղ միջոցները» կռուակցությունը, վորի պատճառով ել կռիվն անարգյունը վերջացավ:

Յեթև մենք նայենք Ֆրանսիայի պատմությանը, կտեսնենք, վոր աշխարհի պրոլետարիատը, սկսած 1789 թվի մեծ հեղափոխությունից, միշտ ել, բոլոր հեղափոխություններում, յեղել և ակտիվ և առաջապահ մի ուժ: Այդ հեղափոխություններում նա հաճախ պաշտպանել և բուրժուազիայի շահերը, իր արյունով բուրժուազիայի համար իշխանություն և զբաղիլ, բայց իր իսկ սեփական գործերում, չնայած հերոսական քանքերին և հակայական զոհերին, ծանր պարտություններ և կրել:

Այս յերևույթի պատճառները պիտի փնտրել Ֆրանսիայի տնտեսական կյանքում: Չնայած այդ ժամանակաշրջանում Ֆրանսիայում նշանակալից կերպով զարգացած եր ծանր արդյունաբերությունը, բայց այնուամենայնիվ այդ ժամանակաշրջանում մանր-արհեստավորական արտադրությունը գերակշռում եր մի շարք արտադրական ճյուղերում, վորպիսիք էին՝ շքեղության ու մոդայի արտադրությունները, պատրաստի հագուստեղենի, տնային կարասիքի, կերասեղենի և այլն, իսկ այդ ճյուղերում, առանձնապես Փարի-

զում, զրազված էին հարյուր-հազարավոր բանվորներ. հետո, պետք և ասել, վոր արտադրության մյուս ճյուղերում ևս — ինչպիսիք են՝ մետաքսագործությունը, մետաղամշակումը և այլն, այդ ժամանակ կրում էին նույնպես տնայնագործական բնույթ:

XIX-րդ դարի առաջին կեսերին գերակշռող արհեստային բնույթի արտադրության այս դրությունն եր, վոր նպաստեց քաղաքային բանվորության աշխատավորական մասի մեջ մանր-բուրժուական ռադիկալիզմի զարգացմանը, ըստ վորի, յեթև քաղաքական կարգը փոխվի և հանրապետություն հիմնվի (հանգերձ ընդհանուր ընտրական իրավունքի), այն ժամանակ հիմնովին կբարեկամվի աշխատավոր ժողովրդի գրությունը:

Բայց վորովհետև խոշոր մեքենայական արտադրությունը հաջողությամբ առաջ եր գնում, աստիճանաբար ընդգրկելով արդյունագործական նորանոր ճյուղեր, արհեստավորին շատ ծանր եր մեքենայական արտադրության հետ մրցել. արհեստավորն ստիպված եր ամեն տեսակի զրկանքներ տանել, վորպեսզի ինքն ել ընկնի պրոլետարիատի շարքերը: Արհեստային արտադրության մեծ մասում, վորտեղ գերիշխում եր գործարքն ու աշխատանքի տնայնագործական ձևը, ավելի սոսկալի շահագործում եր իշխում քան ֆարիկաներում ու գործարաններում, վորովհետև գրանք ստիպված էին մրցել գործարանների հետ:

Ահա թե ինչու Ֆրանսիայի արհեստավորական պրոլետարիատի մեջ, հենց ամենավաղ շրջանում, սկսում և զարգանալ սոցիալիզմի գաղափարը:

XIX-րդ դարի կեսերին Փարիզը հանդիսանում եր

մէ կենտրոն, վերսեղից ամբողջ Յեկրոպայում տա-
րածվում եր սոցիալիզմի տեսութիւնը: Բայց այդ սո-
ցիալիստական գաղափարները, վոր առաջացել էին
այն ժամանակաշրջանում, յերբ դեռ բավականաչափ
չէր հասունացել կապիտալիզմը, յերբ սոցիալիզմը չէր
կարող հենվել պրոլետարական դասակարգային ինք-
նագիտակցութեան վրա, այդ սոցիալիստական տեսու-
թիւնները կրում էին մ ա ն ր - ք ու ը ժ ու ա կ ա ն
և ու տ ո պ ի ս տ ա կ ա ն ք ն ու յ թ:

Մի շարք մտածողներ (գաղափարախոսներ), ինչ-
պէս—Ֆյուրեն, սենսիմոնիստները (Սեն-Սիմոնի կողմ-
նակիցները), նույնպէս և Լուի Բլանը, Պրուդոնը, հա-
ճախ շատ սրամտորեն և խորն էին քննադատում
դեռ նոր հիմնավորվող կապիտալիստական հասարակա-
կարգը, չնայած նրանք մերկացնում ու դատապար-
տում էին կապիտալիզմի բացասական կողմերը, բայց
այսպիսիներն անընդունակ էին կապիտալիզմի կոր-
ծանման ուղիները ցույց տալ:

2. Լիոնի ապստամբությունը: Գաղսնի բնկերու- թյունները յեվ իշխանութիւնը գրավելու նրանց փորձերը

Սեն-սիմոնիստների և ֆուրիերիստների յեռանդող
պրոպագանդան բանվորների կենցաղը բարելավելու
մասին նվիրված հետեւորդներ ունեցավ ուսանողներին,
փորձնք և աշխատում էին այդ գաղափարները տարա-
ծել արհեստավորների և բանվորութեան միջև:

Դեռ 1830 թվականի հեղափոխութեան ժամանակ
Փարիզը ապստամբեց Կարլ X-ը կառավարութեան

կամայականութեան ու բռնութիւնների դեմ և այդ
ժամանակ, բարբիկադների վրա կռոււմ էին մեծ ժա-
սով ուսանողութեանն ու բանվորութեանը: Կարլ X-
ը դից հետո գահ բարձրացող Լուի Ֆիլիպը չպա-
հեց իր խոստումը ժողովրդի շահերը պաշտպանելու
մասին և իր կառավարութեան հինց առաջին իսկ
օրերում գործեց խոշոր բուրժուազիայի ոգտին: Դ ր ա
կ ա ու վ ա ր ու թ յ ա ն ը ն թ ա ց ք ու մ տ ե ղ ի
ու ն ե ց ա ծ ր ա ղ մ ա թ ի վ դ ա վ ա դ ր ու թ յ ու ն-
ն ե ր ի, ա պ ս տ ա մ ր ու թ յ ու ն ն ե ր ի ու թ ա-
գ ա վ ո ր ի դ ե մ կ ա ղ մ ա կ ե ր պ ա ծ մ ա հ ա փ ո ր-
ձ ե ր ի մ ե ջ ա մ ե ն ի ց գ ո ը ժ ու ն յ ա մ ա ս-
ն ա կ ց ու թ յ ու ն ու ն ե յ ի ն ք ա ն վ ո ր ն ե ր ը:

Լուի Ֆիլիպի կառավարութեան ղեկը ստանձնելու
դեռ տարին չբացած, 1831 թվին, Լիոնում մե-
տաքսի մանուկ ֆա կ տ ու ը ր ա ն ե ր ու մ ջ ու լ-
հ ա կ ն ե ր ի ա պ ս տ ա մ ր ու թ յ ու ն ծ ա գ ե ց
Ծայր շահագործումից հուսահատութեան դուռը հասած
30,000 բանվորութեան քաղաքի ծայրամասերից դեպի
կենտրոն շարժվեցին. ցույցի առաջից տարվում եր
գրողակ, վորի վրա գրված եր. «Ապրել աշխա-
տելով, կամ մեռնել կռվի մեջ»: Բանվո-
րութեան դեմ ուղարկած զորքերի մի մասն թնցավ
նրանց կողմը, մյուսն էլ հրաժարվեց կրակել ցուցա-
բարների վրա: Տոս ո ր շարունակ, բանվորութեանը
տեղ դառավ քաղաքին: Ապստամբութեանը ճնշվեց
Փարիզից ուղարկված հատուկ զորամասերի միջոցով:
Խուսափելով կառավարութեան հալածանքներից, ինտե-
լիգենտ և բանվոր հեղափոխակարները կազմակերպե-

ցին գաղտնի ընկերությունն եր: Այդ գաղտնի ընկերություններից փոքր մասը ցանկություն ունէր բոնադրավել ամբողջ մասնավոր սեփականությունը և բաժանել աշխատավորութեան միջև, իսկ մի քանի ընկերություններ ել յենթադրում էին, փոքր բաժանել և կործանել գոյութիւն ունեցող կարգը և հիմնել հանրապետութիւն, փորպնզի անտեսական անհավատարմութիւնը վերանա և աշխատավորութեան գրու-
թիւնը բարեկամի:

1830—1840 թվականներին շրջանում, այդ գաղտնի ընկերութիւնները մի քանի անգամ փորձեցին ապստամբութիւններ կազմակերպել և կոտորածութիւններ ապաւելել, բայց ամեն անգամ ել նրանց ջանքերն ապարդիւն անցան:

Պարզ է, փոքր այդ ապստամբութիւններին մահափորձերին ու գործադուլներին պետութիւնը պատասխանում եր ծանր պատիժներով և բանվորների ու նրանց զեկավարների հալածանքով: Բայց չնայած այդ բոլոր հալածանքներին ու հետապնդումներին, զաղտնի ընկերութիւնների անդամների թիւը գնալով ամէկ ամիսում եր և այդ ծավալով շարժումն եր, փոքր հասցրեց 1848 թվի հեղափոխութեան: Միապետութիւնը տապալից և հանրապետութիւն հռչակից:

3. 1848 թվի հեղափոխությունը յեկ բանվորների հունիսյան ապստամբությունը

1848 թվի հեղափոխութիւնը (փետրվարյան հեղափոխութիւն) ամենահոյակապն և ֆրանսիական մեծ հեղափոխութիւնից հետո: Միայն խոշոր բուրժուա-

գիայի շահերը պաշտպանող թագավորին տապալելու համար, միացել էին՝ միջին և մանր բուրժուազիան, ինտելիգենցիան ու բանվորութիւնը:

Թագավորի գահընկեցութիւնից հետո կազմակերպւած ժամանակավոր կառավարութեան մեջ ընտրվեցին բանվորների ներկայացուցիչները՝ բանվոր Ալբերը և սոցիալիզմի հայտնի տեսարան Լուի-Բլանը:

ՈՎ ԵՐ ԼՈՒԻ-ԲԼԱՆԸ

Լուի-Բլանը խոտորեն ու սրամիտ կերպով բնագաւառում եր կապիտալիստական հասարակարգը, փոքր հասարակութեան անդամներին, դրանց թվում նաեւ բանվորութեան, փոխադարձ կովի ու մրցութեան վրա չէ հիմնված:

Այդ հասարակութեան փոխարեն նա առաջարկում եր հիմնել արտադրական միավորումներ, փորձեց կազմակերպման անհրաժեշտ գումարները պիտի հատկացնէր պետութիւնը: Դրա համար ել նա խորհուրդ եր աշխատավորներին տիրաւալ պետական իշխանութեանը, բայց վոչ այն մարդ, փոքր պրոլետարիատի գլխաւորապէս հայտարարեն, այլ ամենալավ մարդկանց իշխանութիւն հիմնելու համար, այնպիսիներն, փորձեց «բարձր կէանքներն գասակարգային շահերից»:

Այդպիսով նա հովատում եր բուրժուազիայի ու պրոլետարիատի շահերի հաշտեցման հնարավորութեանը: Ըստ Լուի-Բլանի, նոր տիպի կառավարութիւնը պիտի զեկավարէր ամբողջ ազգային արդիւնաբերութիւնը, ամեն կերպ աջակցելով աշխատավորութեան միավորումներին, վերջիններիս արամադրէր արտոնյալ հիմունքներով դանադան վարկեր:

Փորձադրութեան վերացման համար պետք է հիմնվելին հասարակական արհեստանոցներ, փորձեց ամեն փոքր պիտի հնարավորութեան ունենալ աշխատել, անա աշխատող, բոլոր աշխատավորների համար ազատեցնելով կլինէր աշխատանքը:

Շուտով բանվորների ազդեցութեան տակ, ժամանակավոր կառավարութեանը կից, կազմակերպվեց հատուկ հանձնաժողով (լուքսեմբուրգյան հանձնաժողով), փոքր զբաղված եր բանվորների դրութիւնը բարե-

լավող ձեռնարկությունների մշակմամբ: Այդ նույն ժամանակաշրջանում, կառավարությունը կազմակերպեց ազգային արհեստանոցներ, վորպեսզի գործազուրկներին աշխատանք հայթայթի և այդպիսով իր կողմը քաշի նրանց:

Նոր քաղաքական կարգերի հաստատման համար հրավիրվեց Հիմնադիր (Ազգային) ժողով, վորտեղ շատ ու շատ միապետականներ ու տերտերներ կային, վոր ընտրվել էին գյուղական վայրերում: Հիմնադիր ժողովը թշնամաբար եր տրամադրված՝ դեպի փարեղյան պրոլետարիատը և նրան մեղադրում եր անխելամուժականության ու ծուլության մեջ: Հիմնադիր ժողովը ատելությամբ և սարսափով եր նայում այնպիսի «սոցիալիստական ձեռներեցության», վորպիսին էին ազգային արհեստանոցները և լյուքսեմբուրգյան հանձնաժողովը. դրա համար ել նա վորոշեց այդ բոլոր սարսափելի բաներից շտապ ազատվել: Հիմնադիր ժողովը ղանազան պատրվակներով սկսեց գործազուրկներին փարեղից արտաքսել, արհեստանոցների բաժանմունքները իրար յետևից փակել, դժգոհ տարրերին ու ագիտատորներին բանտարկել: Ի վերջո հրատարակվեց մի որոնք, վորի համաձայն 18-ից մինչև 25 տարեկան բոլոր գործազուրկները՝ մոբիլիզացիայի էլին յենթարկվում:

Այդ ժամանակ, դառնության բաժակը լցվեց և բանվորությունը ապստամբեց (պտտմության մեջ հայտնի յե վորպես հունիսյան ապստամբություն)՝ Հիմնադիր ժողովի և նրա հետադիմական կառավարության դեմ:

Կոիմները տեղին չորս որ: Բանվորությունը

պարտվեց: Կառավարությունը դաժանորեն պատժեց ապստամբներին (հունիսյան ջարդեր): Յերկու-յերեք հազար մարդ միայն գնդակահարվեցին: 12 հազար մարդուց ավելի, առանց վորեւե դատի, ֆրանսիական զաղութներն արքայիցին: Շատ թե քիչ հայտնի գործիչները դատի տրվեցին և մահվան պատժի յենթարկվեցին: Լուի-Բլանը և սոցիալիզմի շատ կողմնակիցներ արտասահման փախան:

Բանվորության պարտության պատճառները պիտի բաժանել յերկու կարգի: Մեկն այն եր, վոր կապիտալիզմը դեռ բավականաչափ հասունացած չեր, պրոլետարիական բանակը դեռ փոքրաթիվ եր ու թույլ, դեմոկրատական հանրապետության գաղափարը աշխատավորական շրջաններում այնքան ել քատ հետևորդներ դեռ չուներ (առանձնապես արհեստավորների մեջ):

Մյուս պատճառն ել այն եր, վոր ուսուպիստական սոցիալիզմն ինքնին բանվորներին չեր ցուցադրում կապիտալիզմը կործանելու համար հուսալի ուղիներ և միջոցներ:

Լուի-Բլանը թեև խորհուրդ եր տալիս բանվորներին նվաճել իշխանությունը, բայց նա միևնույն ժամանակ դասակարգային շահերի հաշվեցման, «խաղաղ միջոցներով» կողմնակից եր:

Սոցիալիզմի մյուս մեծ առաջնորդ Բլան էլ ինչ, չնայած զինված ապստամբության կողմնակից եր, բայց նրան միանգամայն խորթ եր պրոլետարիատի կազմակերպման գաղափարը. Բլանկին ավելի գերադասում եր գործել գաղտնի ընկերություններով՝ մի բուռն դավադիրների միջոցով (հենց դրա համար ե, վոր դավադրական գործելակերպը կոչվում ե բլանկիզմ):

Վերը հիշված բոլոր պատճառների հետևանքով՝ Փրանսիական պրովետարիատը մնաց անկազմակերպ, չունեւր համապատասխան կուսակցութիւն ու 1848 թվին կովի դուրս յիկավ առանց զեկավարներէի. և հետեւեալ պրովետարիատի ցուցահանած համարձակութեանն ու քաջութեանը նա պարտութիւն կրեց:

4. Բանվորական շարժումը 1852--71 րվականների օրջանում: 1870 թ. նեղավիտութիւնը: Կոմունան:

Հունիսյան ջարդերէց հետո, Հիմնադիր ժողովը զրկվեց իր դեմոկրատական հենարանից: Փրանսիան շուտով դո՛ւ դառավ բողոքախնդիր Լյուզովիկ Նապոլիոնին, վորը հանրապետութեան նախագահ ընտրվելով, իրեն հայտարարեց միապետ:

Յերկրորդ պետութեան շրջանը (Լյուզովիկ-Նապոլիոնի տիրապետութեան ընթացքում, 1852—1870 թ.) բանվորական շարժման համար, ամենից մտայլ շրջանն էր: Մի կողմից բանվորական շարժման վրա անդրադարձել էր «հունիսյան արշուն առնելը», իսկ մյուս կողմից՝ Նապոլիոն III-ը միապետը վախենալով հանրապետականներից ու սոցիալիստներէց, գաղտնի վտարապետականներից ու միջոցով խտտորեն հետեւում էր բանվորութեանը:

Բացի դրանից, Փրանսիայի արդյունագործութեան աճումն, այդ շրջանում, հետո, Նապոլիոնի ձեռնարկած Փարիզի վերաշինումը բազմաթիւ գործադուրկներ կշահեց և ժամանակավորապես բարձրացրեց բանվորներէ

կենցաղը, վորովիսի հանգամանքը ժամանակավոր կերպով հանգստացրեց պրովետարիատին:

Նապոլիոնի թագավորութեան վերջերում միայն Փրանսիայի բանվորական շարժումը Վին խոտերնացիոնալի ու միջազգային պրովետարիատի հետ կապելը ստեղծելու հետեանքով, սկսում և կենդանանալ: Այդ մասին ներքեւում:

1870 թվին, Լյուզովիկ-Նապոլիոնը պատերազմ սկսեց Գերմանիայի հետ:

Սպասած խոշոր հաղթանակների վտխարեն, մի շարք անասելի պարտութեաններ կրեց Նապոլիոնը և ինչ վոր յերկու ամիս հետո, Փրանսիական ամբողջ բանակը, իր միապետով հանդերձ՝ դերի ընկավ:

Յերբ այս լուրը Փարիզ հասավ, ժողովրդական մասսաները ապստամբվեցին, թագավորին տապալված հայտարարեցին և հանրապետութեան հռչակեցին:

Ընտրվեց ժամանակավոր կառավարութեան:

Փարիզի պրովետարիատը հենց սկզբից անվստահութեամբ վերաբերվեց այդ ժամանակավոր կառավարութեանը, վորի կազմում նա վոչ մի ներկայացուցիչ ու պաշտպան չունեւր:

Կառավարութեան և բանվորութեան միջև շատ տարաձայնութեաններ կային, վոր հետագայում ընդհարումների ու փոքրիկ կռիւների փոխվեցին:

Եւ ավելի վատթարացավ պրովետարիատի ու բուրժուազիայի հարաբերութեանները Հիմնադիր ժողովի ընտրութեաններից հետո, վորովհետեւ այդ ժողովի մեծամասնութեանը բանվոր դասակարգի թշնամիներն էին:

Հիմնադիր ժողովը վոչ միայն չեւ ձգտում խաղաղ

հարարերութուններ ստեղծել Փարիզի աշխատավոր ժողովրդի հետ, այլ ընդհակառակը մի քանի գեղեցիկներ հրատարակեց, վորոնք բացառապես ուղղված էին բանվորության և մանր բուրժուազիայի դեմ: Այդ գեղեցիկներով արհամարական ձևով փոխվեց բնակարանային վարձի վճարման ժամկետը: Վերացվեց նույնպես ազգային գվարդիայի զինվորների մեկ ու կես Ֆրանկ առձիկը, իսկ այդ գվարդիայի զինվորները մեծամասնությամբ գործադուրկ բանվորներ էին: Աշխատավոր ժողովրդի ու ամբողջ Ֆրանսիայի շահերը պաշտպանելու համար, ազգային գվարդիան ընտրեց մի Կենտրոնական կոմիտե:

Հիմնադիր ժողովի կառավարութունը տեսնելով, վոր պրոլետարիատը մի ծրագիր ունի, վորոշեց նրան զինաթափել և 1871 թվի մարտի 18-ից լույս 19-ի գիշերը, զորք զրկեց, վորպեսզի ազգային գվարդիայի թնդանությունը խլեն, բայց այդ զորքերի գեներալներին սպանեցին իրենց զինվորները և մեծ մասով անցան ազգային գվարդիայի կողմը: Տեղեկանալով այդ մասին, Հիմնադիր ժողովի կառավարութունը փախավ Էլերսալ (վոչ հեռու Փարիզից):

Հեղափոխական Փարիզը վորոշեց իր սեփական կառավարությունն ընտրել: Մարտի 26-ին ընտրվեց քաղաքային հեղափոխական դումա (քաղաքային խորհուրդ կամ «կոմմունա»): Այդ քաղաքային նոր խորհուրդը միաժամանակ փոխաբեղում էր նաև Փարիզի կառավարության: Ուրեմն այդ քաղաքահույրը պիտի շարունակեր Փարիզի կառավարության սկսած քաղաքացիական կռիվը Հիմնադիր ժողովի դեմ. այդպես էլ յեղավ, այդ կռիվը «վերսացիները» դեմ պատ-

մության մեջ կոչվում և «կոմմունայի ապստամբություն»:

Կոմմունայի ապստամբությունը համաշխարհային բանվորական շարժման պատմության ամենափայլուն եջերից է: Փարիզի ապստամբ ժողովուրդը առանց կարգին զեկավարման, չունենալով անցյալի վորևէ փորձ, ամենակարճ ժամանակաընթացքում գծեց պրոլետարական նոր հասարակարգի հիմքերը, առաջացրեց մի շարք սոցիալ-տնտեսական բարեփոխություններ:

Բայց յիթև կոմմունային չհաջողվեց շատ բան աշխույժ սոցիալ-տնտեսական ուղղությամբ, դա շատ պատճառներ ունի: Ամենից առաջ հենց այն, վոր կոմմունայում չկար տեսակետների համաձայնություն:

Կոմմունայի անդամների մեջ կային Վերկուպիսմեր, վորոնք ձգտում էին վոչնչացնել քաղաքական կենտրոնաձիգ կարգերը և Ֆրանսիայում հաստատել համայնքների միություններ (ֆեդերացիա), վորոնք իրենց տեղական հարցերում պիտի լինեյին ինքնավար և ինքնուրույն:

Կային նույնպես պրոլետարիատներ, վորոնք իրենց ուսուցիչ Պրուդոնի ուսմունքի համաձայն էին գործում (արտագրական կոոպերատիվներ, փոխանակային բանկեր, մանր արտադրողներին՝ անվերադարձ վարկեր և այլն):* Այդ մարդիկ առում էին

* Պրուդոն ժողով Պրուդոնը (1809—1865) Լուի Բլանին բռնադատվեց հակառակ ապացույցում էր, վոր բուրժուազիայի ու բանվորության շահերը միանգամայն հակառակ են իրար, ուստի և վորևէ միասնականություն մասին խոսք իսկ չէ կարող լինել: Նա նոչ էր անում բանվորության, վոչ մի հույս չգնել կառավար-

քաղաքականութիւնը և կոմունայի սկսած մեծ կռիւն նայում ելին իբրեւ մի ազգային վրա: Հետո կային բլանկիստներ և յակոբինցիներ, վորոնք ձգտում ելին իշխանութիւնը գրավել ու ժողովրդի անունից ղեկաւարտութեամբ հայտարարել: Վերջապէս կային սոսկ հանրապետականներ, վորոնք ցանկանում ելին բուրժուական հանրապետութիւնը պահպանել:

Կոմունայի անկման յերկրորդ պատճառն այն էր, վոր Ֆրանսիական պրոլետարիատը չունէր իր սեփական քաղաքական կուսակցութիւնը, վորը մեր կոմունիստական կուսակցութեան պէս, ինչպէս նա քաջաբար կռիւն չօգտագործեցին, այդ կուսակցութիւնը ա-

րութեան վրա և ամեն ինչ ամեն սեփական ուժերով ազատագրելու համար:

Բայց միաժամանակ էլ հակառակ էր պայքարել հեղափոխական ձեւերին. նա խորհուրդ էր տալիս բանվորներին, իրենց արտադրած ապրանքներն անմիջորէն փոխանակել միմյանց հետ (այդ նպատակին ծառայող փոխանակային բանկերի միջոցով) ու այդպիսով վոչնչացնել խոշոր կապիտալը, բուրժուաներին և ընդհանրապէս յոյս դնալ առանց փողի: Պրուզոնն ասում էր, վոր ընդհանրապէս ձեռնարկութիւնները պիտի մեղմանան, մի ընկերութիւն կազմեն և փոխանակային բանկերից վարկ ստանալով՝ խոշոր ձեռնարկութիւններ հիմնեն: Պրուզոնը յենթադրում էր, թէ այս բոլոր միջոցներով միանգամայն կոչնչանան կապիտալիստական հասարակակարգի հիմքերը, կվերանս շահագործումը և վաշխառական վարկը:

Վերն ասածներէից պարզ է, վոր Պրուզոնը մանր արտադրողները շահերի պաշտպանն էր. հենց զրա համար էլ նրան անվանում են մանր-բուրժուազիայի գազափարախոս. նրան անհրաժեշտ (անիշխանական) էլ են անվանում, վորովհետեւ նա ամեն մի իշխանութիւն ժխտում էր:

պըստամբութեան գլուխ անցնէր և ամբողջ ղեկաւարտութիւնն իր ձեռքը վերցնէր:

Յերրորդ պատճառ. կոմունան ստիպւած էր իր ամբողջ ուշադրութիւնը կենտրոնացնել վերաւելցնելի վրա, վորոնք միացան գերմանական գերութիւնից վերադարձող զորքերի հետ և սրանց ոգնութեամբ մայիսի 21-ին խուժեցին Փարիզ:

Կոմունարները վորոշել էլին մեղմել, անձնատուր չլինել. Փարիզի փողոցներում մահվան արշուճահեղ կռիւներ չկային: Մի ամբողջ շաբաթ տեղի փոփոխային կռիւներ. ամբողջ աշխարհից մեկուսացած, ողակված բազմաթիւ զորքերով, կոմունարները հաղթվեցին:

Այդ ժամանակ տեղի ունեցաւ բուրժուազիայի քստմնելի, մարդկութեան նոր պատմութեան ամբողջ ընթացքում չտեսնված մի վրիժառութիւն: Բուրժուազիայի սարքած այդ անորինակ ու սարսափելի սպանդանոցում միայն գնդակահարութեան յենթարկվեցին (չհաշված կռվում սպանվածներն ու գերիները) 25.000 պրոլետարներ, 3500 մարդ մեռան վերքերից ու հիվանդութիւններից, բացի դրանից 13.700 մարդ արքայազնից, իսկ 70.000 կանայք, յերեխաներ ու ծերունիներ գրկվեցին իրենց կերակրող ձեռքերից: Ամբողջ հինգ տարի շարունակ ռազմական դատարաններն իրենց վայրագութիւններն էլին շարունակում՝ մահվան ու արքայի մատնելով հարյուրավոր մարդկանց:

Այսպէս վրիժառու յեղալ Ֆրանսիական բուրժուազիան պրոլետարիատից, հենց նրա համար, վոր պրոլետարիատը փորձեց յեղաշարժութեան ու արդարութեան մի նոր հասարակակարգ հիմնել:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԶԲՆԱ-
ԿԱՆ ՇՐՋԱՆԸ (ՄԻՆՁԵՎ 1870 թ.)1. Խոշոր արդյունագործության ծաղկումը:
Պրոգրեսիսները յեղ բանվորական կուսակ-
ցությունը

Ֆրանսիական բանվորական շարժման մասին խո-
սելիս մենք ասացինք, վոր ֆրանսիական պրոլետա-
րիատը XIX-րդ դարի առաջին յերեք-քառորդում չու-
նեք իր քաղաքական կուսակցությունը և այդ հանգա-
մանքը շատ ֆրաստերի յեղավ, յերբ Ֆրանսիայի պրո-
լետարիատը կսվի յեր դուրս յեկել բուրժուազիայի դեմ:
Գերմանիայում մենք բոլորովին այլ դրություն
ենք տեսնում:

Գերմանիայում, հենց վոր բանվոր դասակարգն
առաջին անգամ հրապարակ և իջնում, նա ունենում ե-
լի բ ո ս ե փ ա կ ա ն ք ա ղ ա ք ա կ ա ն կ ու լ ա կ-
ց ու թ յ ու լ ն ը:

Առաջինը Ֆ ե ի ղ ի ն ա ն ղ Լ ա ս ս ա լ ն էր,
վոր գերմանական պրոլետարիատին գիտակցել տվեց
քաղաքական կուսակցության անհրաժեշտությունը:
Ֆերդինանդ Լասսալը Գերմանիայի բանվորական շարժ-
ման հենց սկզբնական շրջանի գեղավորն և յեղել:

Հետաքրքրական է, թե այդ ժամանակ ի՞նչ արն-
տեսական պատկեր ունեք Գերմանիան:

XIX-րդ դարի 50-ական թվականներին վերջերից
Գերմանիայում սկսում և զարգանալ խոշոր արդյու-
նագործությունը:

Այսպես, 1863 թ. Պրուսիայում, ամեն մի միլ-
լիոն արհեստավորի դիմաց գործարաններում աշխա-
տում էին յերեք-քառորդ միլլիոն բանվորություն,
իսկ Պրուսիայում, Սաքսոնիայում, Բավարիայում,
Վյուրտտեմբերգում և Բադենում ընդամենը կար մոտ
2 միլլիոն արհեստավորություն, իսկ գործարանային
բանվորություն կար ընդամենը 1½ միլլիոն:

Ինչպես տեսնում եք, այս թվերից յերևում է,
արհեստը զեռ բավականաչափ առաջ էր գործարանից.
բայց այդպես չմնաց, վորոշ ժամանակից հետո խոշոր
արդյունագործությունն առաջ ընկավ արհեստից:

Խոշոր արդյունագործության զարգացման հետ
աճեց, ամբաջավ նաև արդյունաբերական բուրժուա-
զիան, վորը կամաց-կամաց կամք էր յերևան բերում
տիրապետելու կառավարության դեկին: Նա կազմա-
կերպվեց «Ազգային միություն» մեջ, վորը բիշ հետո
դառավ պրոգրեսիստների (հառաջագիմականներ-ի-
քերալներ) կուսակցություն: Այդ «Ազգային միու-
թյունը» իր կողմը քաշեց բավականաչափ բանվորու-
թյուն և նրանց քարոզում, ապացուցում էր, վոր ընդ-
հանուր նպատակ պիտի լինի քաղաքական ազատու-
թյուն ձեռք բերելը, վորովհետև միայն քաղաքակա-
նապետ ազատ պայմաններում և վոր դարկ կատանա
արդյունագործությունը, վոր ձեռնառու յե թե բան-
վորների և թե ձեռնարկողների համար:

Բայց պարզ է, վոր դա կեղծիք էր, դա շահերի ներդաշնակութեան (հարմոնիա) նուշն յերգն էր, ինչ յերգում էյին Անգլիայի տնտեսագետները:

2. Գերմանիայի սոցիալիստական բանվորական կուսակցության ծագումը

1862 թվին «Ազգային միութիւնը» իր հաշվով 12 բանվորներ ուղարկեց Լոնդոնի համաշխարհային ցուցահանդեսը:

Վերադառնալով այդտեղից, բանվորները զեկուցում արին ցուցահանդեսի մասին: Բերլինի բանվորութեան մեջ միտք հղացավ ընդհանուր բանվորական համագումար հրավիրել, քննելու այդ զեկուցման խնդիրները: Վորոշվեց համագումարը հրավիրել Լայպցիգում (Սաքսոնիա) և կազմակերպչական աշխատանքներին համար ել ընտրվեց կենտրոնական կոմիտե: Յանկանայով լավ պարզաբանել համագումարի անելիքները, կենտրոնական կոմիտեն դիմեց Լասսալին և խորհուրդ հարցրեց: Լասսալն այդ ժամանակ արգեն լավ հայտնի յեր բանվորական շրջաններում:

Այդ կոմիտեյի առաջադրած հարցերին իրեն պատասխան Լասսալը գրեց մի գրքուշկ («Պատասխան Լայպցիգի կոմիտեյին»): Այդ պատասխանում Լասսալը բացատրեց բանվորներին մանր արհեստի անկման պատճառները, աշխատավարձի բարձրացումն ու անկումը, պրոգրեսիստների կուսակցութեան քաղաքական էությունը: Լասսալը քննադատում էր բուրժուական տնտեսագետների այն տառջարկութիւնները, վոր արվում էյին բանվորութեան զրուծիւնը բարձրելու

համար և մի ելական խորհուրդ տվեց բանվորութեանը, ինչպէս իր պիտի անի և ինչպէս պիտի քաղաքական կուսակցութիւն: Լայպցիգի կոմիտեն համաձայնվեց Լասսալի մտքի հետ: Դրանից հետո Լասսալն ուժեղ ագիտացիա ծավալեց՝ բանվորական քաղաքական կուսակցութիւն կազմակերպելու մասին: Յեմ 1863 թվին էր, վոր հիմնվեց այդպիսին, — «Ընդհանուր գերմանական բանվորական միութիւն» անունով:

Լասսալի զեկավարութեամբ ընթացող բանվորական շարժման հետ միաժամանակ (կենտրոնը Բերլինն էր) կազմակերպչական աշխատանք էր սկսվել նաև Սաքսոնիայի հարավում (Սեմից քաղաքում): Այդտեղ էլ բանվորական շարժումը զեկավարում էր 1858 թվի հեղափոխութեան գործիչ Վիլհելմ Լիբկնեխտը (Կարլ Լիբկնեխտի հայրը) և բանվոր-տոկար Ավգուստ Բերելը, վոր հետագայում գերմանական սոցիալ-դեմոկրատիայի հայտնի առաջնորդը գառավ:

Լիբկնեխտի ու Բերելի զեկավարութեամբ բանվորութիւնը կազմակերպվեց, և 1869 թվին Եյդենախ քաղաքում հիմք դրվեց սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան (դրանք միաժամանակ կոչվում էյին նաև Եյդենախցիներ):

Այսպիսով գերմանական բանվորական շարժումը չերկու ճյուղ ուներ՝ Լասսալյան և Եյդենախցիներ: Լասսալյանները և Եյդենախցիները միջև ծրագրի և գործելակերպի զանազան մանր-մունք հարցերում տարաձայնութիւններ էյին առաջանում: Ամենախոշոր անհամաձայնութիւնը վոր կար, դա այն էր, վոր Լասսալյաններն իրենց ազգային կուսակցութիւն էյին համարում, իսկ Եյդենախցիները՝

ինտերնացիոնալիզմի կողմնակիցներ։ Յերկու ֆրակցիաների ղեկավարների միջև հաճախ յեղած անհամաձայնություններն անձնական խորթանքի առարկա էին դառնում։ Փորձեր յեղան միացնելու այդ յերկու հոսանքը, բայց ապարդյուն անցան։ Իսկ գերմանական կառավարությունը տեսավ, Վոր բանվորական շարժումը գնալով աճում է, սկսեց հալածել և խտտրեն պատժել բանվորական առաջնորդներին։

Ընդհանուր թշնամու հարվածների տակ լատալյաններն ու եյգենաիցիները մոռացան իրենց տարաձայնությունները և վորոշեցին միանալ։ Այդ միացումն առաջացավ 1875 թվին, Գոթ քաղաքում։ Միացյալ կուսակցությունը կոչվեց «Գերմանիայի սոցիալիստական բանվորական կուսակցություն»։

3. Կառավարությունը հետապնդում է սոցիալիստներին։ Հալեյի յեվ Երֆուրտի համագումարները

Մեծ անհանգստություն եր պատճառում գերմանական կառավարությանը սոցիալիստների միացումը և նրանց ագիտացիայի ու պրոպագանդի հաջողությունը։

Կառավարության գլուխ կանգնած Բիսմարկը վորոշեց խիստ միջոցների դիմել և 1878 թվին ապրիստադի (բարձրագույն որենսդիր հիմնարկություն է) միջոցով անցկացրեց մի որենք՝ սոցիալիստական կուսակցության արգելման մասին։ Սկսվեց սոցիալիստների անողորք հալածանքը, նրանց լրագրերի փակելը, պրոֆմիությունների արգելումը, կուսակցական գրամ-

ների բռնագրավումը, բանտարկություններ, աքստրանք, դատի տալը և այլն։

Բայց չնայած այդ հալածանքներին, սոցիալիստների ուժերը վոչ թե պակասում, այլ գնալով աճում էյին։

Այդ փաստը յերևում է ապիստագի ընտրություններին նրանց ունեցած հաջողություններից։ 1884 թվին սոցիալ-դեմոկրատներ ստացան $1\frac{1}{2}$ միլ. ձայն (անցկացրին 24 պատգամավոր), 1887 թվին՝ $3\frac{1}{4}$ միլ. ձայն և 1890 թվին՝ $1\frac{1}{2}$ միլ. ձայն (35 պատգամավոր)։

1888 թվին Գերմանիայի ինքնակալ դառավ Վիլհելմ II-րդը. (նա, վոր գահընկեց արվեց 1914—18 թվականների պատերազմից հետո տեղի ունեցած գերմանական հեղափոխության կողմից)։ Վիլհելմ II-րդը տեսնելով, վոր սոցիալիստների մասին յեղած որենքն անողուս է, 1890 թվին հրամայեց վերացնել այն։

Այդ որենքի վերացումից հետո, կուսակցության առաջ խնդիր ծառացավ՝ մի նոր կազմակերպություն հիմնել, նոր ծրագիր մշակել։ Այդ հարցը վորոշվեց Հալեյի (1890 թ.) և Երֆուրտի (1891 թ.) կուսակցական համագումարներում։ Երֆուրտի համագումարում ընդունված ծրագրին, կուսակցության հանձնարարությունը, Կարլ Կաուցկին գրեց Մարքսի ուսմունքի վրա հիմնավորված տեսական բացատրություններ (կոմենտարիաներ)։

4. Կարլ Մարքսի ուսմունքը յեվ պրոլետարիատի պայքարը

Կարլ Մարքսի ուսմունքը հակայական ազդեցություն է ունեցել գերմանական բանվորական շարժման կազմակերպման ու զարգացման վրա։

Մարքսն ստեղծեց պրոլետարական աշխարհահայացք, վերի փրկստիայական, տնտեսագիտական, պատմական ու քաղաքական հարցերը,—մի խոսքով, կյանքի ու մտածողության բոլոր հարցերը—ներգաշնակերեն համաձայնեցված են և բղխում են միայն ու միայն պատմական մատերիալիզմի տեսությունից:

Մարդկային կյանքի ուսումնասիրությունն էր, վեր Մարքսին հնարավորություն տվեց հիմնավորել ու խորացնել դասակարգային կռիվի ուսմունքը: Այդ ուսմունքն ասում է, վեր դասակարգային կռիվը հասարակական կյանքի զարգացման շարժիչ ուժն է. ինչպես ասված է «Կոմունիստական մանիֆեստ»-ի մեջ՝ «Հասարակության ամբողջ անցյալ պատմությունը դասակարգերի պայքարի պատմությունն է»:

XVII-րդ դարի կեսերից մինչև XIX-րդի սկզբները (մի քանի յերկրներում նաև ուշ) Յեվրոպայում յերկու դասակարգերի միջև—բուրժուազիայի և ֆեոդալների (ավատների—այսինքն խոշոր հողատերերի) կռիվ տեղի ունեցավ:

Ֆեոդալիզմի դեմ կռիվը համար բուրժուազիան ամենուրեք կազմակերպում էր քաղաքական հզոր կուսակցություններ: Վերսիստե ֆեոդալների հարստահարությունից ճնշված էր ամբողջ ժողովուրդը, զրա համար էլ ֆեոդալիզմի դեմ ունեցած իր կռիվում բուրժուազիան ամբողջ ժողովրդի բոլոր շահագործվողների ներկայացուցիչն էր. հենց այդ էր պատճառը, վեր մյուս դասակարգերին բուրժուազիան իր կողմը գրավեց:

Իշխանությունը գրավելուց հետո բուրժուազիան

դառավ տիրող դասակարգ. այդ ժամանակ միայն պարզվեց այն, ինչ մինչ այդ մարդկանց աչքերից ծածկված էր, այսինքն այն ճշմարտությունը, վեր բուրժուազիայի հզորությունն ամբողջովին հիմնված է պրոլետարիատի անողոր շահագործման վրա:

Շուտով սկսվում է կռիվ բուրժուազիայի և պրոլետարիատի միջև. այդ կռիվն է, վեր լցնում է ամբողջ XIX-րդ դարի պատմությունը և իր ծայր տատնանին և հասել մեր որերում:

Այդ կռիվ պատմությունը ցույց է տալիս, վեր ամենուր, վերտեղ պրոլետարիատը չի ունեցել քաղաքական կուսակցություն, այնտեղ նա անսլայմանորեն պարտություններ է կրել և կամ խաբվելով իր արյունն և թափել բուրժուազիայի հզորությանն ուժ տալու համար: Ուրեմն ամենից առաջ պրոլետարիատին կենսապես անհրաժեշտ է ունենալ իր սեփական քաղաքական կուսակցությունները, վերոնք իրենց հետեից պիտի տանեն պրոլետարական հոծ բանակները և ղեկավարեն նրա ամենորյա կռիվը, նրան պատրաստեն վերջնական հաղթանակի համար:

Մարքսն ուսումնասիրեց մարդկային հասարակությունների պատմությունը, այդ հասարակությունների տնտեսական կառուցվածքն անցյալում ու ներկայում և մյուս կողմից էլ հենվելով իր ժամանակակից սոցիալ-քաղաքական կյանքի ղիտողության վրա, գծեց այն գլխավոր ուղիները, վերոնցով պրոլետարիատը պիտի ընթանա վերջնականապես տապալելու համար կապիտալիզմի լուծը:

Կարլ Մարքսն էր, վեր տեական ղեկավար ցույց-մունքներ տվեց և մի անգամ իսկ պարզեց, թե բան-

վորական շարժման անտեսական ու քաղաքական կողմերի (կուսակցութեան և պրոֆմիութեաններ) փոխհարաբերութեաններն ինչպես պիտի լինեն, հետո թե՛ ինչ հարաբերութեան մեջ պիտի լինի պրոլետարական կուսակցութեանը—բուրժուազիայի լիքերով ու զեմուկրատական կուսակցութեաններին հետ, ինչպես պիտի լինի պրոլետարիատի վերաբերմունքը դեպի բուրժուազիայի գաղափարախոսութեանը (կրոն, բարոյականութեան, գեղարվեստ...), հետո, պրոլետարիատի գիլտատուերայի շրջանում՝ հասարակութեան անտեսական ու քաղաքական կազմակերպումն ինչպես պիտի լինի։ Մի խոսքով, Կարլ Մարքսն եր, վոր իր ուսմունքով անդհահատելի ցուցմունքներ տվեց պրոլետարիատին՝ նորա մտածողութեան ու գործունեութեան, կովի և շինարարութեան համար։

5. Պրոճարժման առաջանալը։ Պրոճարժման լեվ փաղափական կուսակցութեաններին միջեվ մեծ փոխնարաբերութեաններին հաստատուը

Երֆուրտի համադումարից հետո, գերմանական սոց-դեմոկրատական կուսակցութեանը իր հետագա համադումարներում (պարտեյտագ), մամուլում, պարլամենտում և ամենորոյա կուսակցական աշխատանքներում, բոլոր հարցերի լուծմանը մոտենում եր Մարքսի ուսմունքի վոգու համաձայն։

Առավելագուէ կարեւոր նշանակութեան ունեցավ գերմանական պրոլետարական բանակի կազմակերպման համար այն հանդամանքը, վոր հենց սկզբից ճիշտ փոխհարաբերութեաններ սկսվեց կուսակցութեան և պրոֆմիութեաններին միջև։

Անգլիայում, ինչպես վերը տեսանք, XIX-րդ դարի կիսերին դեռ քաղաքական կուսակցութեան չեղած, կազմակերպվեցին հզոր պրոֆկազմակերպութեաններ (տրեդ-յունիոններ)։ Հետո, ինչպես տեսանք, Ֆրանսիայում բանվորական և քաղաքական կուսակցութեան և պրոֆմիութեանների միջև չի յեղել և ներկայումս ել չկա ցանկալի միութեան։ Գերմանիայում հակառակն ե, սոցիալ-դեմոկրատիայի ծագման հենց առաջին որերից, ճիշտ հարաբերութեաններ ե հաստատվում բանվորական շարժման անտեսական ու քաղաքական կողմերի միջև։

Գերմանիայում նույնպես յերկու տարրեր աղբյուրներից են սկիզբ առել բանվորական քաղաքական ու պրոֆեսիոնալ շարժումները։ 1864 թվին եր, վոր Լատտալյանականները սկսեցին պրոֆմիութեաններ կազմակերպել։

Լատտալյանական միութեաններում փոխադարձ ոգնութեանը յերկրորդական տեղ եր տրվում. միութեանները պիտի լինեյին զ ու տ պ ա յ ք ա ռ ի կազմակերպութեաններ։ Նույն 1868 թվին եր, վոր սկսվեց նաեւ ե յ դ ե ն ա խ ա կ ա ն միութեանների կազմակերպումը. գրանք ընդհակառակը՝ մի ո խ ո գ ն ու թ յ ա ն ը կարեւոր տեղ եյին տալիս։

Լատտալյանականների ու եյդենախականների միացումից հետո, 1875 թվին, առաջ մղվեց միութեաններին չեղծութեան հարցը, այսինքն միութեանները չպիտի զբաղվեն քաղաքականութեամբ։ Այս սկզբունքը առաջ քաշվեց այն նպատակով, վորպեսզի բոլոր բանվորներին, առանց կուսակցական, կրոնական և այլ համոզումների խտրութեան, լայն հնարավորութեան տրվի՝

մտնելու պրոֆմիտեթյունների շարքերը: Այդ ժամանակ, փաստորեն, պրոֆմիտեթյունները սերտ հարաբերություն մեջ էին կուսակցության հետ և ամբողջովին նրա ղեկավարության տակ էին գտնվում:

«Սոցիալիստների մասին» գործող որենքի վերացումից հետո (1890 թ.) պրոֆեսիոնալ շարժումը վերածնվում է, հատուկ թափ ստանում և իր գործունեության հիմնական հարցերում շարունակում և սերտ կապի մեջ լինել սոց-դեմոկրատական կուսակցության հետ և վերջինիս գաղափարական ու գործնական ղեկավարության տակ աշխատել:

Այսպիսով, գերմանական բանվորական շարժումը, թվում էր, վոր ուղիղ ճամբով և ընթանում, բայց շատ շուտով պարզվեց, վոր արտաքինապես ամուր, պայքարի ընդունակ և միացյալ կուսակցությունը ներքին կյանքում տառապում և շատ լուրջ հիվանդություններով:

Բայց նախքան այդ մասին խոսելը, քիչ հետ նայինք և քննենք առաջին պրոլետարիատի միջազգային միավորման, այսինքն 1-ին Ինտերնացիոնալի հարցը:

6. Առաջին Ինտերնացիոնալ

Բանվորական շարժումը չի կարող իր նպատակին հասնել, այսինքն կոմունիզմն իրականացնել, առանց նախորդք ամբողջ աշխարհի բանվորությունը մի հզոր պրոլետարական բանակում միացնելու: Ինչու, վորովհետև համաշխարհային բանվորական շարժման դեմ առգեմ կանգնած է համաշխարհային բուրժուազիան. յեթե մի վորեն յերկրում պրոլետարիատին հաջողվի սոցիալական հեղափոխություն կատարել, այն ժամանակ

մնացած բոլոր յերկրների բուրժուական պետությունները ամեն ինչ պիտի անեն, սկսված հրդեհը հանգցնելու:

Այդ պետությունները իրենց սեփական դործը պիտի համարեն կովել մյուս յերկրների հեղափոխության դեմ: Վոր այդ պղպես և, փաստ հեղափոխության վրա բոլոր մեծ ու փոքր գալերի մինչ այժմ շարունակվող հարձակումները:

Հենց դրա համար էլ, բոլոր յերկրների բանվորները կապիտալիզմի լուծը կործանելու համար, իրար պիտի ոգնեն:

Բոլոր յերկրների բանվորության միավորման գաղափարը, միավորման, վորը նպատակ պիտի ունենար կովելու համաշխարհային քաղաքական դեպուտիզմի (բռնակալության) և տնտեսական ստրկացման դեմ—վաղուց ի վեր զգացվում էր՝ քաղաքական արքուրականների կողմից (փախստականներ և իրենց յերկրից հալածված հեղափոխականներ):

Յեկ ահա 1834 թ. Փարիզում հիմնվեց «Արհամարվածների (?) միությունը», «Հալածվածների միությունը» և 1836 թ.՝ «Արդարների միությունը», վոր հետո տեղափոխվեց Լոնդոն և 1847 թվին վերափոխվեց «Կոմունիստների միություն»:

1845 թվին, Լոնդոնում առաջացավ «Յեղրայրակից դեմոկրատների միությունը», իսկ 1854 թ. «Միջազգային կոմիտեն»: Բայց այս բոլոր կազմակերպությունները դեռ սաղմերն էին իսկական միավորման:

Բոլոր յերկրների բանվորների իսկական միավորմանը հիմք դրվեց 1864 թ.:

Մի տարի դրանից առաջ էր, վոր ոռոսական միապետության լծի տակ անքող Լեհաստանը ապստամ-

բեց, վորն անասելի խստությամբ ցարիզմը խեղդեց: Յարեղմի դաժանության լուրը ցնցեց ամբողջ Յիվ-րոպան:

Անգլիական տրեդ-յունիոնների հրավերով, Ֆրանսիայի բանվորության ներկայացուցիչները 1864 թ. Լոնդոն ժամանեցին՝ քննելու Լեհաստանին միասնական ոգնություն հասցնելու հարցը: Ֆրանսիայի պատգամավորներին միացան, այդ ժամանակ Լոնդոնում գտնվող՝ Գերմանական ու Իտալական բանվորները: Լեհաստանի հարցի քննությունից հետո, հարց բարձրացվեց համաշխարհային մի բանվորական միավորում կազմակերպելու: Յիվ վորոշվեց կազմակերպել «Բանվորների միջազգային ընկերություն»: Այդ նոր կազմակերպվող ընկերություն կանոնադրությունը և բացադրականը հանձնվեց գրելու Կ. Մարքսին:

Դրանից հետո, միջազգային բանվորական շարժման նպատակների ու գործելակերպի խնդիրների քննություն համար, տեղի են ունենում Ինտերնացիոնալի կոնգրեսներ:

Ինտերնացիոնալն ունեցել է հինգ կոնգրեսներ և յերկու կոնֆերանսներ:

Այդ կոնգրեսներում բացակայում էր լրիվ համաձայնությունը: Ֆրանսիական պատգամավորների մեծամասնությունը կանգնած էր մանր-բուրժուական պրոլետրիզմի տեսակետների վրա, իսկ գերմանական ու անգլիական պատգամավորները, մեծ մասով՝ մարքսիստական: Բելգիացիները, չնայած հարում էին մարքսիզմին (կոլլեկտիվիստներ), բայց քաղաքական կոլից հեռու էին: Ամենից շատ տարաձայնություններ էին սերմանում բա կ ու լ ի ս տ ն ե ռ ը կամ

անարխիստները (գլխավորապես՝ իտալացիները, շվեյցարացիները և սպանացիները), վորոնց ղեկավարում էր ռուս քաղաքական Մ. Ա. Բակունինը:

Շնորհիվ Մարքսի խորադնին ու հոյակապ ընդհանդատության, կոնգրեսներում հաջողվեց, հակառակ մանր-բուրժուական, անարխիստական ձգտումների, անցկացնել՝ մարքսիստական-պրոլետարական տեսակետները: Բայց տարաձայնությունները վերջիվերջո 1872 թ. հասցրին (Հաագայի կոնգրեսում) անջատման, իսկ հետագայում ել Ինտերնացիոնալը քայքայվեց:

Առաջին Ինտերնացիոնալը, չնայած կարճ կյանք ունեցավ, բայց համաշխարհային բանվորական շարժմանը հսկայական ոգուտ տվեց: Նա աչալուրջ արձագանք էր տալիս բանվորական շարժման բոլոր կարեւոր անցքերին, նյութական ու բարոյական ոգնություն էր ցույց տալիս բանվորության կողմին՝ ընդդեմ կապիտալի: Իր կոնգրեսներով և զանազան յիւլյութներով, Ինտերնացիոնալը բանվորների միտքը սեպում էր կարեւոր հարցերին, ստիպում էր խորհել իրենց կյանքի տեսական ու գործնական հարցերի մասին:

Քննադատելով մանր-բուրժուական, ուտոպիստական հոսանքները Ինտերնացիոնալը ոգնեց բանվորության ինքնաճանաչման զարգացմանը և նրանց գիտակցության մեջ ամրացրեց այն համոզումը, վոր տնտեսական կոլից պիտի անցնել քաղաքականին: Վերջապես ին Ինտերնացիոնալն էր, վոր բանվորության միջազգային կապերի հիմքը գրեց, և զարկ տվեց ինտերնացիոնալիզմի զարգացմանը, վորը քառորդ դար անց, նոր ձևեր ընդունեց:

ՅԵՐԿՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆ

1. II-րդ Ինտերնացիոնալի կազմակերպումը

I-ին Ինտերնացիոնալի կազմավորումից մինչև 90-ական թվականների սկիզբները, յեվրոպական բանվորական շարժման ամենածանր շրջանն էր: Ֆրանսիայում, կոմունայի անկումից հետո, սկսվեց հակահեղափոխությունը և բանվորական շարժումը համարյա քայքայվեց, կենդանություն նշույլներ ցույց տալով միայն 80 ական թվականներին: Գերմանիայում, ինչպես տեսանք, սոցիալիստների դեմ գործող որևէ կուսակցությունը թույլ չէր տալիս ազատ ու լեզալ գործունեություն:

Անգլիայում շարունակում էր զարգանալ չափավոր, հետադիմական արեղ-յունիոնիզմը, վոր զուրկ էր ապագայի փայլուն հեռանկարներից և պարապած էր անտեսական պայքարի մանրունքով:

Բայց հենց ինքը կապիտալիստական զարգացումը գալիս էր բժշկելու ամեն ինչ: Սրբյունագործությունը զարգանում էր, կապիտալիզմը զարգանում էր, և ղրա հետ միատեղ աճում էր պրոլետարիատի բանակը, վորը իր ուժի, իր զարգացման հետ միասին՝

ձգտում էր կազմակերպվել՝ պայքարելու համար գոյություն ունեցող հասարակարգի դեմ:

1877 թվականներից նորից փորձեր են արվում, պրոլետարիատի միջազգային միավորություն ստեղծելու (1886 և 1888 թվականներին Փարիզում հրավիրվում են համաշխարհային բանվորական կոնֆերանսներ): Միայն 1889 թվականներին է հաջողվում ստեղծել մեկ ամուր միավորում. Փարիզում հրավիրվում է «Միացյալ սոցիալիստների միջազգային կոնգրես», վորին ներկա էյին 20 պետություններից ներկայացուցիչներ:

Վորոշում է կայացվում, ամեն յերեք տարին մեկ հրավիրել միջազգային սոցիալիստական կոնգրեսներ մշտական կապ հաստատելու համար զանազան յերկրների բանվորական կուսակցությունների միջև: Այդտեղ է, վոր վորոշվում է նույնպես մայիսի մեկը հայտարարել վորպես պրոլետարիատի միջազգային տոն, և այդ ուր բանվորությունը ամբողջ աշխարհի կապիտալի հանդեպ իր ուժերը պիտի ցուցադրի, առաջադրելով բանվոր դասակարգի հիմնական պահանջները, առաջին հերթին ութ ժամյա բանվորական օրվա պահանջը:

Այսպես ծագեց II-րդ Ինտերնացիոնալը: Ինչպես տեսնում եք, I-ին և II-րդ Ինտերնացիոնալների տարբերությունն հետևյալումն է. I-ին Ինտերնացիոնալը անհատ բանվորների և հեղափոխականների կամ տարբեր յերկրների բանվորական խմբակների (սեկցիա) միավորումն է, իսկ II-րդ Ինտերնացիոնալը՝ զանազան յերկրների բանվորական կուսակցությունների միավորումը:

Այսպիսով մշտական կապ էր հաստատվել զանազան յերկրների սոցիալիստական բանվորական կուսակցութիւնների միջև. այդ կապի համար մի լավ միջոց էին կոնգրեսները:

Մի կոնգրեսից մինչև մյուսի հրավիրելու ժամանակամիջոցը, 1900-ական թվականներից սկսած, կապ էր պահպանում միջազգային սոցիալիստական բյուրոյի միջոցով:

Կոնգրեսներում քննվում էին սոցիալիստական ծրագրերի ու գործելակերպի հետ կապված հարցեր, բանաձևեր էին ընդունվում, վորոնք պարտադիր էին II-րդ Ինտերնացիոնալի մեջ մտնող բոլոր կուսակցութիւնների համար:

2. Անգլիական բանվորական շարժումը յերկրորդ ինտերնացիոնալի ժամանակաընթացքում

Անգլիայում, շատ թույլ կերպով, 80-ական թվականներից սկսում է զարգանալ սոցիալիզմը: 1883 թվականից, մարքսիստական հողի վրա, Գալսթոնի զմայնի ղեկավարութիւնը ձևավորվեց սոցիալիստական ֆեդերալիստներ, բայց դա յեւ շատ քիչ հետևորդներ ունցավ և յերբեք կարեւոր նշանակութիւն չունեցավ Անգլիայում: Նույն 1883 թվին էր, վոր առաջացավ նաև Ֆարիսիական լեհերի ու լեհերի, վորը սոցիալիստական շատ թույլ դույն ունէր և ընդգրկում էր գլխավորապէս բուրժուական ինտելիգենցիային: Այդ ընկերութիւնը քարոզում էր զանազան բարեփոխութիւններ՝ հոգուտ բանվոր դասակարգի,

իսկ սոցիալիզմի իրականացումը ամենահեռավոր ապագայի գործ էր համարում:

1893 թվին հիմնվեց «Անկախ բանվորական կուսակցութիւնը»: Նա իրեն նպատակ էր դրել սոցիալիզմի իրագործումը և դրա համար էլ իրեն կոչում էր սոցիալիստական, բայց այդ կուսակցութիւնը այնպիսի ուղիներով է գնում, վոր բնավ կապ չունեն վոչ պրոլետարական ըմբռնումներ և վոչ էլ պրոլետարական գործելակերպի հետ:

Այսպէս, «Անկախ բանվորական կուսակցութիւն» ղեկավարները մտածում են, վոր սոցիալիզմը կարելի է իրականացնել այդ գաղափարը քարոզելով վոչ միայն պրոլետարիատի մեջ, այլ և բուրժուազիայի, վորի հետեանքով նրանք դասակարգային կռիւն շատ նեղ տեղ են տալիս, աշխատելով զանազան կոմպրոմիսների (գիշում) և համաձայնութիւնների միջոցով ամեն ինչ վերջացնել: Պարզ է, վոր նրանք հերքում են սոցիալական հեղափոխութիւնը և պրոլետարիատի գիկատատւրան:

Այդ կուսակցութիւնն առաջնորդները հաշտեցնում են նույնիսկ պրոլետարական աշխարհահայացքն ու կրոնը և հնարավոր են համարում սոցիալիզմի առաջխաղացումը միապետական կարգերի ժամանակ իսկ:

Դա մանր գործերի ու զանազա առաջխաղացման սոցիալիզմն է, վոր յերբեք չի տարածվում բանվորական լայն մասսաներում, վորովհետև նա չունի այն պարզութիւնը, հզորութիւնն ու մարտական բնույթը, վոր ունի ներկայիս կոմունիզմը, վորից այնպիսի ստեղծում են անգլիական բանվորական շարժման ղեկավարներից շատերը: Այդ պատճառով «Անկախ բանվորական կու-

«սակցութեան» հաջորդութեանները պարլամենտի ընտրութեաններին աննշան ելին: «Անկախ բանվորական կուսակցութեան» և մյուս սոցիալիստական կազմակերպութեան ղեկավարները ըմբռնեցին, վոր քաղաքական կուսակցութեան համար անհրաժեշտ է այնպիսի կազմակերպութեաններ ստեղծել, վորոնք ընդգրկեն չայն բանվորական մասսաները, և առաջին հերթին տրեղ-յունիոնները:

Այս հարցը սոցիալիստները հարուցեցին տրեղ-յունիոնների 1899 թվի Պլիմուտի կոնգրեսում և հիմնվեց բանվորական ներկայացուցչութեան մի կոմիտե, վոր հիմք դրեց Անգլիայի բանվորական կուսակցութեան:

Անգլիական բանվորական կուսակցութեան այնպիսի միատարր չէ, ինչպիսի որինով գերման. սոցիալ-գեմոկրատիան, ուր մնաց թե ինչպիսի մեր կոմունիստական կուսակցութեանը: Իր ծրագրում նա կոչվում է «Ֆեդերացիա» (ինքնուրույն մասերի միավորում), վորովհետև նրա մեջ վոչ թե անհատ մարդիկ ելին մտնում, այլ տրեղ-յունիոնները, սոցիալիստական կազմակերպութեանները և նույնիսկ կոոպերատիվները: միայն 1918 թվից է թույլատրվում անհատների մուտքը:

Ինչպիսի նախնական ծրագրում է տաված, բանվորական կուսակցութեան նպատակն է՝ պարլամենտում կազմակերպել բանվորական ֆրակցիա, վորն իր իսկ սեփական ղեկավարները կունենա և կվարի իր քաղաքականութեանը:

Նախնական ծրագրում սոցիալիզմի մասին վոչինչ չէ տաված: 1918 թվին մի կեստ ավելացրին ծրա-

գրում, վոր առում է, թե բանվորական կուսակցութեան վերջնական նպատակն է արտադրութեան գործիքները համայնականացնել:

Չնայած բանվորական կուսակցութեան ծրագրի ու գործելակերպի բոլոր բացասական կողմերին, նրա առաջ գալը հսկայական նշանակություն ունեցավ. բանվորական մասսաները գուրս քաշեց քաղաքական ատրկացումից ու անտարբերութեանից. մինչ այդ բանվորական մասսաները քարշ ելին դալիս լիբերալ կուսակցութեանների պոչից ու հաճախ ձայն ելին տալիս նրանց ցուցակներին:

Կազմակերպված բանվորական մասսաները խոշոր քաղաքական ուժ են դառել և նրանց մնում է յերկրորդ քայլն անել՝ դեն շարտել իրենց խայտառակ առաջնորդների—ոկֆորմիստների անտանելի լուծը:

Ներկա ընթացիկ դեպքերը ցույց են տալիս, վոր մոտենում է այն ժամանակամիջոցը, յերբ այդ վճռական քայլը կարվի:

XX-րդ դարի առաջին տասնամյակում Անգլիայում առաջացավ նաև սինդիկալիստական շարժումը, վոր կիսով չափ մարքսիստական էր, կիսով չափ անարխիստական (թե ինչ է սինդիկալիզմը, տես հաջորդ 3-րդ կետը). հետո մի նոր տեսակի սոցիալիզմ էլ առաջացավ այսպիսի կոչված՝ գիլդայական սոցիալիզմը: Այդ յերկու հոսանքներն էլ իրենց այլ նպատակների հետ միատեղ, նըպատակ են դրել՝ պայքարել անգլիական տրեղ-յունիոնի գրվածութեան դեմ և քարոզում են արտագրական տրեղ-յունիոնի դմ. այսինքն, վոր տրեղ-յունիոնները համաքայարային կազմակերպու-

թյուններ դառնալուց պիտի դադարեն և ընդգրկեն վոչ թե ըստ մասնագիտության (պրոֆեսիա), այլ նույն արտադրության բոլոր աշխատողներին:

Արտադրական տրեդ-յունիոնիզմի իրականացումը ներկայումս անգլիական պրոֆշարթման ամենա-այրող հարցերից է:

Բոլոր ասածներից ի՞նչ պիտի յեզրակացնել:

Յերկրորդ ինտերնացիոնալի ժամանակաշրջանում, ինչպես և անցյալում, անգլիական բանվորական շարժման մեջ գերակշռում էր տրեդ-յունիոնիզմը և ուղորդյունիզմը. այսինքն պայքար տնտեսական մանր բարեփոխությունների համար և այդ պայքարի հարմարեցումը բուրժուական-կապիտալիստական պայմաններին:

Բայց միաժամանակ անգլիական բանվորական շարժումը խոշոր քայլերով հառաջդիմել է:

Առաջին՝ հիմնավորել է սոցիալիզմը, վոր քիչ եր-մնացել էքվեր անցյալի բռնած գործերակերպում. յերկ-րորդ՝ ստեղծվել է ինքնուրույն բանվորական կուսակ-ցություն, յերրորդ՝ արդ մի շարժում է սկսվել պրոֆ-միությունների միաձուլման և արտադրական ուղղու-թյամբ վերակազմակերպելու ոգտին:

Վերջապես, վոր ամենագլխավորն է, անգլիական բանվոր դասակարգը սկսել է ակտիվ կռվի մեջ մտնել կապիտալիզմի դեմ:

Դրան ապացույց կարող է լինել 1906—1914 թը-վականների մի շարք հոյակապ և կատաղի կոիվները (լոնդագործների, յերկաթուղայինների, փայտագործնե-րի, նավակառուցման բանվորների), յերբ թվում էր,

թե անգլիական կապիտալիզմը մահվան տաղնապ ե-սպրում:

Բայց, շնորհիվ տրեդ-յունիոնների առաջնորդնե-րի ջանքերի, առաջնորդների, վորոնց պաշտպանում ե-յին արդյունաբերության լավ վարձատրվող բանվորնե-րը, միշտ ել այդ գործադուլները վերջացել են զիջում-ներով և բուրժուազիայի հետ կայացրած համաձայնու-թյամբ:

3. Փրանսիական բանվորական շարժումը II-րդ ինտերնացիոնալի ժամանակաշրջանում

Կոմունայի կործանումից հետո, Փրանսիայի բան-վորական շարժումը նոր ընթացք ունեցավ, վորի գըլ-խավոր հատկանշական կողմն այն է, վոր կազմակերպ-վեց սոցիալիստական կուսակցություն (ավելի ճիշտը— կուսակցություններ) և զարգացավ սինդիկալիստական տիպի պրոֆեսիոնալ շարժումը:

Սոցիալիստական կուսակցության հիմքը դրվեց 1880 թ. Հավրի կոնգրեսում, վորտեղ և ծրագիր-մինի-մումը ընդունվեց (կապիտալիստական հասարակակար-գում-բանվորության պահանջները ձևակերպված). այդ ծրագիրը կազմել էյին Գիզն ու Լաֆարգը, Մարքս ու Ենգելսի մասնակցությամբ: Այդ սոցիալիստական կու-սակցությունը չորս մասի բաժանվեց, կամ ավելի ճիշտ ասած չորս առանձին կուսակցությունների. գեդիստնե-րի, ալլեմանիստների, ավելի ձախ թեքման պասսիբի-լիստների և զեպի աջ թեքվող անկախների:

Այդ կուսակցությունները մրցում էյին իրար հետ

և այդպիսով թուլացնում Ֆրանսիայի սոցիալիստական շարժումը:

1898 թվից սկսած, մերձեցում ե սկսվում կուսակցության այդ առանձին մասերի միջև. ֆրանսիական սոցիալիստները դեկավար ժառանգորհներն էր փայլուն ազիտացիա տանում այդ ուղղությամբ: (Ժորեսը իր կյանքի վերջին տարիներում, իր ամբողջ հոգով ծառացել էր դանազան յերկրների բանվորության համար ծրագրվող համաշխարհային սպանդանոցի, իմպերիալիստական պատերազմի դեմ և գալաճանորեն սպանվեց բուրժուական ազգասերների կողմից, պատերազմի հենց սկզբում):

Չնայած կուսակցության տարբեր առաջնորդներին ջանքերին, ֆրանսիական սոցիալիստական շարժման մեջ մինչ այժմ էլ չկա միասնականություն:

Ֆրանսիական սոցիալիստական կուսակցությունը (վոր 1905 թվին միայն վերջնականապես միացրեց բոլոր սոցիալիստներին) յերբեք հեղափոխական ոգի չի ունեցել, ընդհակառակը, միշտ էլ, մանր ռեֆորմները, ընտրական պրոպագանդան գերադասել է կապիտալիզմի կործանմանը: Այդ ուղղությունից (գոյություն ունեցող հասարակակարգին հարմարվելը) և մյուս կողմից էլ տեսական հիմնավորման բացը թուլացրել են սոցիալիստների ազդեցությունը լայն բանվորական մասսաների վրա:

Ֆրանսիայում, ավելի զարգացավ պրոֆեսիոնալ շարժումը, վոր 11-րդ Ինտերնացիոնալի ժամանակաշրջանում սխիկալիստական ուղղություն ստացավ («սխիկալիստ» ֆրանսերեն նշանակում է պրոֆմիություն),

Սխիկալիզմի գլխավոր առանձնահատկությունն է, վոր նա խուսափում է քաղաքականությունից: Պրոֆմիությունները (սխիկալիստներ) հրաժարվում են միանալ սոցիալիստական կուսակցությունների հետ, ուր մնաց թե յինթարկվել նրանց. սխիկալիստները աշխատում են կապիտալիզմի դեմ կռվել իրենց սեփական միջոցներով, առանց պարլամենտական միջոցների (հաշտարար առյան, միջնորդ դատարաններ): Կապիտալիզմի դեմ կռվելու ամենահիմնական միջոցը սխիկալիստները համարում են ընդհանուր գործադուլը:

XIX-րդ դարի վերջին, սխիկալիստները միացան մի ընդհանուր միավորման մեջ, վոր կոչվում է աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիա (ԱԸԿ) և վորին հարեցին նաև աշխատանքի բիրժաները, իրենց սկզբի շրջանում հիմնվել էյին աշխատանքի պահանջն ու առաջարկը կանոնավորելու, բայց դարդանալով նրանք սկսեցին զբաղվել նաև այն շրջանի սխիկալիստների կազմակերպումով (տեղական սխիկալիստներ):

Ֆրանսիական սխիկալիստների խուսափելը քաղաքականությունից պիտի բացատրել յերկու պատճառներով: Առաջինը՝ դա անցյալի անհաջող վորձերն են, վորոնց վրա հենված նրանք պնդում են, վոր բանվորական շարժումը շարունակ պարտվել է քաղաքական հողի վրա. յերկրորդ պատճառն այն է, վոր սոցիալիստական կուսակցությունները իրենց ուղղությունիստական քաղաքականությամբ չեն կարողացել զրավել լայն մասսաներին:

Քիչ ազդեցություն չի ունեցել նաև պրուդոնիզ-

մը, վորը իր մանր-բուրժուական պրոպագանդով, բան-
վորներին ներշնչում եր, վոր պիտի խուսափել քաղա-
քականությունից:

4. Գերմանիայի բանվորական շարժումը II-րդ ինտերնացիոնալի ժամանակափոխում

II-րդ ինտերնացիոնալի կազմակերպումից քիչ
անց, գերմանական ս.-դ. կուսակցութեան մեջ յերևան
յեկավ այսպես կոչված «Ռեվիզիոնիզմը», վորի ղեկա-
վարն եր Եդվարդ Բերնշտեյնը:

Իր գրվածքներում, Բերնշտեյնը աշխատում ե ա-
պացուցել, վոր Մարքսի տեսակետները մասամբ հնա-
ցել են և գլխավորապես չեն համապատասխանում ի-
րական փաստերին, ուստի և պետք ե վերաքննել, ռե-
վիզիայի յենթարկել (այստեղից ե ծագել ռեվիզիոնիզ-
մը): Բերնշտեյնի և նրա համախոհների կարծիքով կա-
պիտալիստական հասարակարգի սոցիալիստականին
փոխանցվելը պիտի կատարվի աստիճանական բարե-
փոխումների և վոչ թե հեղափոխական հեղաշրջման հե-
տևանքով: Այսպիսով, գերմանական ս.-դ. կուսակցու-
թեան մեջ առաջացավ ռեֆորմիստական հոսանքը: Կու-
սակցութեան ղեկավարների մեծամասնութիւնը, վոր
գեմ էյին Բերնշտեյնին և հավատարիմ մնացին Մարք-
սի աշխարհայացքին, իրենց կոչեցին որթողականի-
ֆոխանակ ռեվիզիոնիստներին արտաքսելու կուսակ-
ցությունից և այդպիսով վերջ դնելու տեսութեան ու
գործնականի մեջ յեղած յերեւումներին, ուղղափառ
(որթողական) մարքսիստները ամեն կերպ աշխատեցին,
զանազան զիջումներ անելով, սկզբել ճեղքվածքը:

Կուսակցական կոնգրեսներում, վորտեղ ռեվիզիո-
նիստները բազմաթիվ ուժեղ ներկայացուցիչներ ու-
նեյին (Ֆոլմար, Հայնե և այլն), հաճախ կիսատ-պատ-
բանաձևեր էյին ընդունվում:

Հաճախ յերբուրեւ ընույթ էյին կրում նաև ռեյս-
ստագի (պարլամենտ) յեղելները: Այս բոլորը ճակա-
տագրական հետևանքներ ունեցավ ս.-դ. կուսակցու-
թեան համար, վորը գլորվելով, գլորվելով հասավ մինչ
անցյալ պատերազմի շրջանի խայտառակ վիճակին:

XIX-րդ դարի 90-ական թվականներից սկսած,
գերմանական պրոֆշարժումը արագորեն աճում ե.
1895 թվին ս.-դ. պրոֆմիութիւններն ունեյին 260
հազար անդամ, իսկ 1914 թ.—2 և կես միլիոն:

Բայց իրենց զարգացման համընթաց, գերմանա-
կան պրոֆմիութիւնները թեքվում են դեպի աջ և
ձգտում են ազատվել կուսակցութեան ազդեցությունից
և ղեկավարութիւնից:

Այսպես. 1905 թ. Քյոլնի կոնգրեսում, հակառակ
կուսակցութեան իյննի համագումարի վորոշմանը, ընդ-
հանուր գործադուլը ընդունվեց վորպես մի նպատա-
կահարմար միջոց պրոլետարական կովի:

Հետո. կուսակցութեան և պրոֆմիութիւնների
միջև տարաձայնութիւններ առաջացան մայիսի 1-ի
տոնակատարման մասին: Պրոֆմիութիւնները պնդում
էյին, վոր յերեկոյան պիտի կատարել մայիսմեկյան
տոնը, վորովհետև շատ ղեպքերում ձեռնարկատերերը
մայիսմեկյան գործադուլներին պատասխանում են
յուկառուսներով:

Պրոֆմիութիւնների ազդեցութեան տակ եր

նույնպես, վոր վերացվեց կուսակցութեան վորոշումը մայրամեկյան ֆոնդի կազմակերպման մասին:

Պրոֆմիությունների ղեկավարները, վոր դժգոհ էին կուսակցութեան «բռնությունից», իրենցն արին՝ կուսակցութեան Մանգեյմի համագումարն (1906 թ.) ընդունեց, վոր պրոֆմիությունները բանվորական շարժման հավասարազոր մի մասն են:

5. II-րդ Ինտերնացիոնալը պատերազմի նախորդակին

Պատերազմի նախորդակին II-րդ Ինտերնացիոնալն իրենից ներկայացնում էր պրոլետարիատի մի հոյակապ միջազգային կազմակերպություն:

Այսպես. Անգլիայի տրեդ-յունիոններն ունեին 4.500.000 կազմակերպված բանվորություն, պարլամենտում 50 պատգամավոր, վոր ընտրվել էին 500.000 ձայնով: Ֆրանսիական սոցիալիստական կուսակցությունն ուներ 72.765 անդամ, պարլամենտում 102 պատգամավոր, վոր ընտրվել էին $1\frac{1}{2}$ միլլիոն ձայնով: Դերմանիայում պրոֆմիություններն ունեին $2\frac{1}{2}$ միլիանդամ, սոց.-դեմոկրատական կուսակցությունն ուներ մոտ մեկ միլլիոն անդամ, ռախստագում 110 պատգամավոր, ընտրվել էին 4.250.000 ձայնով: Սոցիալիստների ազգեցությունն ուժեղ էր նույնպես՝ Իտալիայում, Բելգիայում, Զվիցերիայում և Դանիայում:

Պարբերաբար հրավիրվում էին միջազգային սոցիալիստական կոնգրեսներ, քննվում էին միջազգային բանվորական շարժման տեսական ու գործնական խնդիրները:

Այդ կոնգրեսներում քննվող ամենակարևոր հարցերից մեկը, դա բուրժուական պետությունների ազգամա-խմբերիալիստական վոտնձգությունների դեմ ադա-տիվ կռիվ մղելու հարցն էր. Հե վոր այդ պատերազմն սպառնում էր բանվորութեան արջան մեջ խեղդել միջազգային միավորումը:

Յեկ այս հարցում, 1914 թ. պատերազմից շատ վաղ, յերևան յեկավ II-րդ Ինտերնացիոնալի յերկկությունն ու տատանումները. նա տնընդունակ էր պրոլետարական գործակերպի ամենակարևոր հարցերում պարզ ու շիտակ քաղաքականություն վարել:

Միջազգային սոցիալիստական կոնգրեսներում (Շտուտգարտում 1907 թ. և Կոպենհագենում 1910 թ.), յերբ քննվում էին, թե ինչ դիրք պիտի բռնի պրոլետարիատը պատերազմի դեպքում, տոտարկվեց յերկու գիծ՝ պաշտպանողական և հարձակողական կովի տեսակետները. պաշտպանողական պատերազմը արգարացի համարվեց և պրոլետարիատին թույլ տրվեց թշնամու հարձակման դեպքում պաշտպանվել:

Փոխանակ այս տեսակետների սխալ լինելը ապացուցելու, տեսակետներ, վոր բուրժուական բարոյականութեան Հափտնիշով են մոտենում հարցին և վոչ թե պրոլետարիատի դասակարգային կովի և նրա վերջնական նպատակների իրագործման. փոխանակ զատապարտելու այդ սխալ տեսակետները կոնգրեսը լուռ համաձայնություն տվեց այդ սխալ թեորիային ու տակտիկային և այդպիսով բանվորութեանը փոխադարձ բնաջնջման մատնեց:

Ճիշտ է, այս կոնգրեսներում յերևան յեկավ նաև ալիի ձախ տեսակետը (պաշտպանում էին ֆրանսիա-

կան ու անգլիական պատգամավորները), վոր պահանջում եր պատերազմի դեպքում ամենավճակումի ջոկներին դիմել՝ մինչև իսկ ընդհանուր գործադուհների ու ապստամբություններ, ճիշտ է և այն, վոր այդ կոնգրեսներում ամեն տեսակի սպառնալիքներ և յին կարգացում իմպերիալիստական պետությունների հասցեյին, բայց պիտի ասել, վոր այդ բանաձևերում, թեև ուղ ծածկված ձևով կար պաշտպանողական ու հարձակողական կովի տեսությունը, վոր անխմաւտ, անարժեք եր գործնում բանաձևերի սպառնալիքները: Ահա թե ինչու, յերբ բռնկեց պատերազմը, յերբ անհրաժեշտ եր խոսքից գործի անցնել, բոլոր յերկրներին սոցիալիստներն ել զանազան ճեղքվածքների դռան, վորպեսզի դառնան ինտերնացիոնալիզմի հաղար անգամ կրկնված սկզբունքներին: Ամեն մի յերկրի սոցիալիստներ գտնում եյին, վոր իրենց պետությունը պաշտպանողական կողմ է և հակառակորդը հարձակողական:

Անգլիայի, Գերմանիայի և Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցություններն ու պրոֆմիլությունները յորաքանչյուրը «քաղաքացիական հաշտություն» կնքեց իր կառավարության հետ և կոչարեց իր բանվոր դասակարգին պաշտպանել հայրենիքը: Առանձնապես անտանիլի յեր գերմանական սոց. դեմոկրատների նույնպես և ֆրանսիական սինդիկալիստների վարքագիծը. վորովհետև գերմանիայի որթող (ուղղափառներ—Մարքսի թեորիայի կողմնակիցներ) սոց. դեմոկրատները մինչև այդ համարվում եյին համաշխարհային պրոլետարիատի տեսական ու գործնական ղեկավարները, իսկ ֆրանսիական սինդիկա-

լիստներն ել իրենց հայտարարում եյին «տահալրենիք» և սպառնում եյին պատերազմի գեպքում՝ ընդհանուր գործադուլ հայտարարել:

Հետևելով իրենց առաջնորդներին, պատերազմող յերկրների բանվորությունը, կորցրեց իր տնտեսական ու քաղաքական կարեոր նվաճումները:

Միլիթյունների և գործադուլների ազատության վերացումը, աշխատանքի պաշտպանության սառարեղում նույնպես մի շարք կենսական նվաճումների վերացումը, բանվորությանը նորից դրեց անուղիղ շահագործողների և նրանց կառավարությունների կեղեքող լծի տակ: Այդ նույն ժամանակ պատերազմի բոլոր ճակատներում սկսվեց պատմության մեջ չտեսնված մի սպանդանոց—բոլոր յերկրների բանվորությունը, վոր քիչ առաջ յեղբայրանում եր, սկսեց իրար վռնչացնել:

ՅՐՐՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

1. Յերկրորդ Ինտերնացիոնալի անկման պատճառները

Յերկրորդ Ինտերնացիոնալի խայտառակ անկման պատճառները հետևյալումն են:

Ինչպես տեսանք զրքի անցյալ զլուխներում, արևմտյան Յեվրոպայի յերեք գլխավոր յերկրների բանվորական շարժման նկարագրից, պարզորեն կարելի չե նկատել յերկու ուղղութիւն ուժգործիստական (այլ կերպ ասած ոպպորտունիստական կամ մանր-բուրժուական) և հետո հեղափոխական (խակական պրոլետարական):

Ինչպես վերն տեսցինք, անգլիական պրոֆեսիոնալ շարժման հենց սկզբից շարժումը բաժանվեց՝ «սովորածների» և «անվարժների», աշխատավորական «արիստոկրատիայի» և սևագործ մասսաների:

Նույն յերևույթը մենք տեսնում ենք նաև Յիվրոպայի բոլոր յերկրներում:

Բանն այն է, վոր կապիտալիստական, իմպերիալիստական պետութիւնները (առանձնապես Անգլիան և Ֆրանսիան) իրենց զազութներից և այլ հետամնաց յերկրների շահագործումից քամած անտեսական հյութերից ստանում էին և այժմ էլ ստանում

են հսկայական գերվաստակներ: Այս գերվաստակներէ մի չնչին մասը նրանք բաժին էլին հանում պրոլետարիատի վորակյալ վերնաշերտին, վորպեսզի այդպիսով նրան կապեն պոլութիւն ունեցող հասարակական զաւրդին:

Բանվոր դասակարգի այդ լավ վարձատրվող ու չափ էլ ապրող մասն ընկղմվում է մանր-բուրժուական սովորութիւնների և ձգտումների մեջ և դրա համար է, վոր կապիտալիզմի հետ յեղած վճռական կռիւ ընթացքում գերադասում է ամեն ինչ վերջացնել զիջումներով և զանազան համաձայնութիւններով:

Շատ պրոֆմիութիւններում, առանձնապես այնպիսիներում, վորտեղ բարձր անդամավճարներ են, այդ համաձայնութիւններն են և ահա դրանց շարքերից են դուրս դալիս ներկայիս պրոֆչինովիկներն ու գործիչները: Ընդոտ նույն մանր-բուրժուական վոգով են շնչում նաև յեվրոպական սոցիալիստական կուսակցութիւնների ղեկավարներից շատերը. այդ ղեկավարները միշտ էլ տեղական հիմնավորումներ են վնասում, արդարացնելու իրենց վոչ-հեղափոխական, հակապրոլետարական գործելակերպը:

Ուրդ Ինտերնացիոնալի թուլութիւն և անկման միւս պատճառը, դա, չնայած արտաքին համերաշխութիւն, նրա ներսում թագավորող անհամաձայնութիւնն է և միադնականութիւն չգոյութիւնը:

Մինչ պատերազմի էլ Ուրդ Ինտերնացիոնալը թի տեսականում և թե գործնականում կազմված էր խայտաբազկա ապրերից. այսպես՝ հետեղական և հեղափոխական մարքսիստների կողքին նաև մանր-բուրժուական ոպպորտունիստներ. հետո, սոցիալական հե-

դափոխութեան և պրոլետարիատի գիկտատուելայի կողմնակիցներին կողքին կային սեկվիտներով և կողմնակիցներ և դասակարգային հակամարտութիւններ հաշտեցման, մի խոսքով—փոքր գործերի և դանդաղ առաջխաղացման կողմնակիցներ:

Յերրորդ, վոր նույնպէս կարևոր է, II-րդ խնդրանքին առաջին կողմնակիցներին շատ թույլ է: Նա չունենէր համապատասխան կենտրոն, վորը զեկազարեւր բոլոր մասերի աշխատանքը և դրանց նախադատութեան վճռական և միասնական գործողութեան:

Միանք են այն գլխավոր պատճառները, վոր անկման հասցրին II-րդ խնդրանքին առաջին:

Բայց յուրաքանչյուր բացատրական յերևույթ ունի նաեւ իր դրական կողմերն էլ: Խնդրանքին առաջին կողմը, վոր սկզբում այնքան սոսկալի յերթում, շատ քարերար հեռանքներ ունեցավ:

Պատերազմը և նրան հաջորդող Ռուսաստանի Հոկտեմբերյան հեղափոխութեանը, նույնպէս ել գերմանական հեղափոխութեան ուժերի նոր դասավորում ստեղծեցին: մի կողմից բոլոր սեփորմատական, մանր-բուրժուական տարրերը համախմբեցին II-րդ խնդրանքին առաջինի դրոշի տակ և մյուս կողմից ել կազմակերպեց կոմունիստական խնդրանքին առաջին: վոր պայքարում է լենինովի գրողի առջի:

Բայց վոչ պրոլետարիան, մանր-բուրժուական գրողի տակ գործող II-րդ խնդրանքին առաջինի գիւ իր շարքերում և պահում կազմակերպեց պրոլետարիատի նշանակալից շարքերը, վորոնց նա կեղծ ֆրազիերով և օնտմեջ խոստումներով բխցնում է և այդպիսով ամբողջում համաշխարհային կապիտալի գիր-

քերը, պաշտպանում բուրժուազիայի հետագա տիրապետութեանը:

III-րդ խնդրանքին առաջինի նպատակն է բանվորական մասնակցներին ազատագրել այդ մանր-բուրժուական ստրկութեանից և վճռական կովի հանել համաշխարհային կապիտալիզմի դեմ, վորը վաղուց արդէն փակ է:

2. Անգլիական բանվորական շարժումը մեր օրերում

Վերը 58-րդ յերևում) նշեցինք, վոր XX-րդ դարի առաջին տասնամյակից սկսած անգլիական բանվորական շարժման մեջ նկատվում է թեքում դեպի ձախ: Այս թեքումն ել ավելի խորացավ և ուժեղացավ պատերազմից հետո:

Բանը նրանումն է, վոր Անգլիան վոչ միայն համաշխարհային շուկայում արդէն կորցրել է (անցյալ դարի վերջերից) իր նախկին մոնոպոլ գիրքը, այլեւ հզոր մրցակիցների կողմից (Ամերիկա, Յապոնիա, Գերմանիա) հետ և շարավել Անգլիան հետ շարավել, այժմ յերկրորդական տեղ է դրավում հետեւյալ պատճառներով. նախ, վորովհետեւ Անգլիայի արդյունաբերութեան գլխավոր ճյուղերը (ածուխի արդյունաբեր., նավաշինարարութեան և այլն) տեխնիքապէս հետ են մնացել. հետ են մնացել, վորովհետեւ յերկար տարիներ մոնոպոլիան է տիրել արդյունաբերութեան շատ ճյուղերում, նրանց տեղերը խթան չեն ունեցել տեխնիկական քարեկալի:

Անգլիայի հետ շարավելու յերկրորդ պատճառն այն է, վոր նրա առևտուրը կրիզիսի շրջան է ապրում:

խիկ սա հետեանք և արդյունաբերական ապրանքներ սպառող յերկրների ընդհանուր միավորման և մյուս հոգմից ել անգլիական գաղութների սեփական արդյունաբերութեան զարգացման. անգլիական գաղութներն առաջիկա պես ել անսահման ապառման շուկա չեն և վոչ ել եժան հում նյութերի մատակարարող:

Ճիշտ այնպես, ինչպես անգլիական արդյունաբերութեան XIX րդ դարի յերկրորդ կիսերի հսկայական զարգացումն անգլիական բանվոր դասակարգի տնտեսական դրությունը մեծապես բարձրացրեց, այդպես ել ներկայիս տնտեսական ճգնաժամը մի սպառնալիք և անգլիական բանվոր դասակարգին, գլխավորապես մինչ պատերազմն ունեցած նրա նվաճումներին՝ կյանքի և աշխատանքի պայմաններին, իսկ այդ պայմանները քանի գնում վատթարանում են, վորովհետև անգլիական բուրժուազիան իր ֆևասները գցում և պրոլետարիատի ուսերին:

Պարզ և, վոր անգլիական բանվորները յեռանդով կռվում են բուրժուազիայի ձգտումների դեմ. անգլիական բանվոր դասակարգն արեւմուտքում ներկայումս դառնում և համաշխարհային պրոլետարիատի ամենաձախ զորամասը և իր յելույթներով ու վորոշումներում ցուցադրում և հեղափոխական կամք, չնայած նրա առաջնորդները բացարձակորեն ուղարկողներն առական գիծ են բռնել, վոր վերջերս ուղղակի դավաճանութեան բնույթ և կրում:

Այստեղ մենք կանգ կառնենք անգլիական բանվորական շարժման ձախացումը բնութագծող վերջին շրջանի մի քանի մոմենտների վրա:

1) Անգլիական բանվորական շարժումը և պրոֆ-

շարժման միասնականութունը, 2) Անգլիայի հանքագործների դործադուլը:

Անգլիայի բանվորութեան համակրանքը դեպի Հոկտեմբերյան հեղափոխութունն արտահայտվեց նրանով, վոր 1919 թվին ամենուր կազմակերպվեցին խոտերվեցիայի դեմ դործող կոմիտեներ «Ձեռքերդ հեռու Ռուսաստանից» անունով: 1920 թվին, Խորհրդային Ռուսաստանի դրութեանը ծանոթանալու համար, անգլիական բանվոր դասակարգը տրեդ-յունիոններից մեկ մոտ ներկայացուցչութուն ուղարկեց:

Այս յերեւոյթն ստեղծեց մոտեցում տրեդ-յունիոնների և մեր պրոֆմիությունների միջև: Տրեդ-յունիոնների 1924 թ. Գոզլի կոնգրեսում, վորտեղ խորհրդային պրոֆմիությունների ղեկավար ընկ. Տոմսկին խոսեց, մի բանաձև ընդունվեց, վորով ընդգրծվում էր ամբողջ աշխարհի պրոֆմիությունների համար միասնական ինտերնացիոնալ ստեղծելու անհրաժեշտությունը:

Այս ցանկությունն ավելի շեշտվեց, ուժեղ կերպով առաջագրվեց ձախ փոքրամասնութեան կոնֆերանսում և հետո յեւ տրեդ-յունիոնների տեղական խորհուրդների կոնֆերանսում:

Այս բոլորի հետեանքն այն յեղով, վոր տրեդ-յունիոնների Գլխավոր Խորհուրդը մի կոմիտե ընտրեց, վորը ՀԱՄԿԽ-ի կոմիտեյի հետ միասին կազմեց միասնականութեան Անգլո-Ռուսական կոմիտե: Դրանից հետո, տրեդ-յունիոնների 1925 թվին Սկարբորոյում հրավիրված կոնգրեսը հավանություն տվեց անգլո-ռուսական կոմիտեյի կազմակերպմանը, հուլյնպես և այն բոլոր քայլերին, վոր արվել էր պրոֆշարժման միասնականութուն ստեղծելու:

Բայց միասնականության համար Պրոֆինտերնի և անգլիական արեղ-յունիոնները գեղավորների կողմից սկսված ազիտացիան Յեվրոպայի պրոֆմիությունների մեավորման, Ամստերդամի Ինտերնացիոնալի⁶ կողմից վճռական հակադրման հանդիպելու:

Ամստերդամի Ինտերնացիոնալը վախենում է (և միանգամայն տեղին) Պրոֆինտերնի ազդեցությունից:

Բայց առաջին հարվածը հենց նրանով է հասցրված Ամստերդամի Ինտերնացիոնալին, վոր նրա շարքերում գտնվող անգլիական արեղ-յունիոնները վճռահանորեն կողմնակից են միասնականության:

3. Ընդհանուր գործադուլը, հանգագործների գործադուլը

Պատերազմից հետո, յերկու տարի ետ Անգլիայի ածուխի արդյունաբերությունը շարունակեց մնալ հաջողակ, վորովհետեւ բոլոր արդյունագործական յերկրներում ածուխի պահաս կար: Իսկ 1920 թվից քանի գնում, այնքան ուժեղացնում է Անգլիայի ածուխի ար-

* Ամստերդամի Ինտերնացիոնալն առաջացել է պատերազմից հետո, 1919 թվին, սկզբներում ընդգրկում էր բոլոր յերկրների պրոֆմիությունները (բացի ՍՍՀՄ-ից) մի միջազգային մեավորման մեջ, վորի գլուխ էլին անցել սեֆորմիստ գեղավորները, վորոնք չեն ճանաչում զստակարգային կռիվ և այդ հակա-յոսկան պրոֆմիավորումը դարձրել են գոյություն ունեցող կապիտալիստական հասարակարգի մի հենաբառ:

1920 թվի կեսերին կազմակերպվեց պրոֆմիությունների կարմիր Ինտերնացիոնալը (Պրոֆինտերն), վոր ներկայումս ընդգրկում է կոմունիստական տեսակետ վրա հանգնած կամ գրան հարող ամբողջ աշխարհի պրոֆբարձուր:

տադրության ճգնաժամը և խորնիքական բնույթի⁷ և ստանում:

Դրա պատճառները հետևյալներն են.

Առաջին. ածուխի պահանջի ընդհանուր իջկումն արդյունաբերության մեջ, եներգիկայի այլ ազդյութից ոգավելու (սպիտակ ածուխ, հավթի վառելանյութեր) հետևանքով:

Յերկրորդ. անգլիական ածխարդյունաբերությունը շատ ցրված է (յերկրի զանազան շրջաններում) և շատ կտրված է պատկանում է 1800 սեփականատեր-ձեռնարկատերերի:

Այսպիսի ցրված լինելն արդեւք է հանդիսանում ածուխի արդյունաբերության մեջ ոգատագործելու տեխնիքական կատարելագործումները: Բայց հիշալ պատճառներից Անգլիայի ածխարդյունաբերությունը հակառակ հողային տուրքեր ու կապալներ և տալիս այն հողատերերին, վորոնց հողամասերում գտնվում են հանքերը:

Ահա այս բոլորը շատ թանգացնում են անգլիական ածուխը: Ածուխի արդյունաբերության ճգնաժամի հետևանքով, 1920 թ. սկսած, հանքատերերի և հանքագործ բանվորության միջև ընդհարումներն անպակաս են. հանքատերերը ձգտում են կրիդիտի առաջացրած ծանրությունը գցել բանվորության ուսերին:

Այս պայքարը սրվեց 1921 թվի ապրիլի լոկաուտին: Հանքատերերն ոգավելով արդյունաբերության կրիդիտի սրվելուց, բանվորությանն առաջարկ արին աշխատադարձն իջկնել և հավաքական պայմանագրերն ըստ շրջանների կնքել:

Բանվորությունը պաշտպանեց համապետական

մասշտաբի պայմանագիրը և պահա նճդրեց պետական-
նապեղ ածուխի արդյունաբերությունը: Յեռյակ հա-
մաձայնությունը, վորի կազմի մեջ, բացի հանքա-
գործներից, մտնում էին նաև յերկաթուղայիններն ու
փոխադրողները, վորոշեց լուծուտին պատասխանել
ընդհանուր գործադուլով:

Բայց ղեկավարների (Թումաս, Հոջես, Ուիլյամս)
դավաճանության հետևանքով, հինգշաբթի, ապրիլի
15-ին նշանակված ընդհանուր գործադուլը վիժեց.
(այստեղից և «սև հինգշաբթի» կոչումը):

Բայց հանքագործները վորոշեցին առանց մյուս
միությունների շարունակել գործադուլը, վորը տեղեց
13 շաբաթ ու զիջումներով վերջացավ:

1922-23 թվերին անգլիական ածուխի արդյու-
նաբերության գրությունը ժամանակավորապես լավա-
ցափ, վորովհետև Ամերիկայի հանքագործների գործա-
դուլի հետևանքով ածուխի գինը բարձրացավ և յերկ-
րորդ, այդ ժամանակ ֆրանսիացիք արդեն զրավել
էին գերմանական ածուխի (Ռուր) ավազանը:

Բայց 1924 թ. սկսած գրությունը նորից ծան-
րանում և և 1925 թվին, պայմանագրերի վերակնքման
ժամանակ, հանքատերերը նորից պահանջեցին՝ աշխա-
տավարձն իջեցնել և բանվորական որը յերկարացնել:

Վորպեսզի աշխատանքի և կապիտալի հերթական
ընդհարումը չլինի և դրա գտան հետևանքներից խու-
սալի, անգլիական կառավարությունը պետական
գանձարանից գրամական սուբսիդիա (գրամական ոգ-
նություն) տվեց հանքատերերին:

Բայց դա մի ժամանակավոր հետաձգում էր,
սուբսիդիան արվեց մինչև 1926 թ. ապրիլ ամիսը:

Այդ ժամանակաշրջանում պետությունն ուրիշ
միջոցներ եր վորոնում՝ ածուխի արդյունաբերության
գրությունը լավացնելու համար. այս նպատակով նշա-
նակվեց կառավարական մի հանձնաժողով (կոչվում էր
«Թագավորական հանձնաժողով») Հերբերտ Սամուելի
գլխավորությամբ (Սամուելի հանձնաժողով): Այդ
հանձնաժողովը հետևյալ յեղբակացությունների հանգեց-
Աճուխի արդյունաբերության գրությունը ծանր հա-
մարելով, հանձնաժողովը շահագրգռված յերկու կող-
մերին ել զոհողությունների կոչ արեց. հանձնաժողովը
սուբսիդիան տալն իբրև անձեռնմխ պետական բյու-
ջեյին՝ փաստակար համարեց, իսկ հանքերի պետակա-
նացումն ել մերժեց, վորովհետև այդպիսով խախտված
կլիներ բուրժուական հասարակության հիմքերը:

Թագավորական հանձնաժողովը գտնով «հարը»
նա առաջարկեց բանվորությանը հետևյալ զիջումներ
անել. կամ աշխատավարձն իջեցնել 10% -ով և կամ
ել բանվորական որը յերկարացնել:

Դեռ մինչև թագավորական հանձնաժողովի գե-
կուցման հրատարակումը, անգլիցին բանակցություն-
ներ հանքագործների և հանքատերերի միջև:

Հանքատերերը հայտարարեցին, վոր յեթե կա-
ռավարությունը չշարունակի իրենց սուբսիդիա տալ,
իրենք պայմանագիրը կխախտեն և նոր պայմանագիր
կը կնքեն միայն աշխատավարձի իջեցման և կամ աշ-
խատանքի որվա յերկարացման պայմաններով: Ջեո-
նաբերատերերը միաժամանակ պնդում էին, վոր չեն
-գիջի, նորից յերբեք պայմանագիր չեն կնքի համապե-
տական մասշտաբով, պայմանագիր կկնքեն միայն ըստ
տուանձին շրջանների:

Տերերի այս պահանջներին հանքագործներով պատգամավորական կոնֆերանսը պատասխանեց մի բանաձևով, վերով բոլոր շրջաններին առաջարկում եր ամուր կերպով սնդեկ նախկին աշխատավարձի վրա, պնդել, վոր մնա յոթժամյա բանվորական օրը և պայմանագիրն էլ միայն համապետական մասշտաբով կնքվի:

Մեջ ընկավ կառավարությունը, վոր անմիջապես հանքատերերի կողմն անցավ և բանվորներին անընդունելի զիջումներ առաջարկեց: Սպրիլի 30-ին հանքատերերը լոկալաւ հայտարարեցին:

Դրա նախօրյակին եր, վոր տրեգ-յունիոնների Գլխավոր Խորհրդի միջոցով հավաքվեց բոլոր միությունների գործկոմիներ կոնֆերանս. 3,653,529 ձայնով, ընդդեմ 49,911 կոնֆերանսը վորոշեց Գլխավոր Խորհրդին լիազորել՝ ընդհանուր գործադուլ հայտարարել, վորը և սկսվեց մայիսի 3-ին: Գլխավոր Խորհրդի առաջարկով մեկը մյուսի յետեից սկսեցին կանգ առնել արդյունագործության հիմնական ճյուղերը. սկսվեց համաշխարհային, պատմական նշանակություն ունեցող մի հոյակապ կռիվ: Կառավարությունը մորիլիզացիայի յենթարկեց ֆաշիստներին ու շաքեյլերիսերներին և սկսեց բանտարկել կոմունիստներին, իսկ բանվորներին էլ պրովոկացիայի յենթարկել:

Բայց հենց սկզբից եր, վոր աշխարհի առաջնորդներ, ինչպիսին են Թոմասն ու Մակդոնալդը և նույնիսկ Գլխավոր Խորհրդի ավելի «ձախ» անդամներ սարսափում էին սկսված կռիվ հեռանքներից: Նրանք միաձայն հայտարարում էին, վոր գործադուլը քաղաքական նպատակ չունի, վոր միայն առնետական

4 նա. վոչ թի իշխանությունը գրավելու համար ե, այլ մի կտար չօր հացի մասին ե խոսքը:

Յերր պետությունը մի ինչ վոր դատավորի միջոցով գործադուլն «անորինական» համարեց, զեկա-վարներն արհալարա կերպով սկսեցին դատապարտել գործադուլը, վոր նրանց կարծիքով մի սպառնալիք եր պրոֆմիությունների գոյություն, նրանց կապիտալների խժաման. առաջիններն սկսեցին զիջումների ու հաշտության կոչ անել:

Կարճ տասն, զեկավարները վախեցան քաղաքացիական կռիվ բռնկումից և իրենց ամբողջ ուժերով աշխատեցին գործադուլին վերջ գնել:

Մայիսի 12-ին Գլխավոր Խորհուրդը վերջեց հայտարարել կառավարությանը, վոր Սամուելի հանձնաժողովի առաջարկների հիմունքներով գործադուլը զարդարեցվում ե:

Բայց հանքագործների գործկոմը, միություն քաղաքացիար Կուկի գլխավորությամբ, մերժեց միանալ աչդ զավաճանական վորոշմանը: Յեղավ նույնը, ինչ 1921 թվին. հանքագործները վորոշեցին շարունակել գործադուլը միայնակ: Հանքագործների գործադուլը վեց ամիս շարունակվեց: Պրոֆինտերնը և խորհրդային պրոֆմիությունները ցույց տվին յեղբայրական համերաշխություն, խոշոր նյութական միջոցներ հատկապես երկրի հանքագործներին:

„ԱԿՏ ՏՐԵԴՅՈՒՆԻՈՆՆԵՐԻ ՅԵՎ 1927 Ք. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ“

Անգլիայի կադմակերպված բանվորության կողմից բախտի կամքին թողնված և յոթ մասի ահա հերոսական պայքարից ուժած պայքարից լեռնագործների պարտությունը կապիտալիստներին դրություն լիակատար տերը դարձրեց:

Այժմ, մասերի բաժանելով բանվոր դասակարգը, վորը չկարողացավ միասնական կուռ ճակատով կադմակերպված հակահարված տալ, անգլիական կապիտալիստները, ոգտագործելով պետական իշխանությունը ապալարատը, կարող եյին հարձակումն սկսել ամբողջ բանվոր դասակարգի վրա:

Այդ ընդհանուր հարձակման հենց առաջին պատկերն է հանդիսանում «Տրեդ-յունիոնների և 1927 թվի արդյունաբերական կոնֆլիկտների մասին կադմած աղտը»:

Անգլիական բանվորներն այդ նոր որենքը կոչեցին «շտրեյկբրեխերների մեծ քարտ»: Յեւ իսկապես, նա ամենահոգատար կերպով ապահովում է շտրեյկբրեխերների ազատությունը, առաջադրու յուրաքանչյուր գործադուլ, բոլոր միջոցներով աշխատում է խորտակել կադմակերպված աշխատանքի հզորությունը:

Նոր որենքը, անցնելով պարլամենտական բոլոր աստիճաններն ու մանկով իր ուժի մեջ 1927 թվի

հուլիսին, միանգամից անորինական և հայտարարում վոչ միայն ընդհանուր գործադուլը, այլև ամեն տեսակի «համակրանքի գործադուլները», բոլոր այն գործադուլները, վորոնք «հատարական կեցությունը ֆիսա հասցնելով, ձգտում են ուղղակի կամ անուղղակի կերպով վորեն բանի հարկադրել կառավարությունը»: Անորինական և համարվում նաև զրամական և բոլոր այլ տեսակի ոժանդակությունը նման «անլեզալ գործադուլին»:

Դա դեռ քիչ է. յուրաքանչյուր այդպիսի «անլեզալ գործադուլի մասնակցող կարող է վարչական կարգով տուգանվել մինչև 100 ֆունտ, կամ բանտարկվել 3 ամսով և դատաբանով մինչև 2 տարվա բանտարկության դատապարտվել»:

«Որինական գործադուլ» հասկացողությունը դիտմամբ որենքում շատ մութ է բնորոշված, այնպես, վոր վերջիվերջո, յուրաքանչյուր գործադուլ, վոր պետք է հեռնարկատերերին, կարող է անորինական հայտարարվել հաշտարար դատարանի կողմից (վորը գլխավորապես ընտրվում է հեռնարկատերերի միջից):

Ամենահրաշալին այն է, վոր այդ որենքը հետադարձ ուժ ել ունի: Այսինքն՝ թեև նա ընդունվել է միայն 1927 թվի հուլիսին, բայց կարող է կիրառվել սկսած 1926 թվի մայիսից: Նշանակում է՝ ընդհանուր գործադուլին մասնակցողները կարող են «որինական պատիժ» կրել այն սարսափի և այն ֆուսաների համար, վոր նրանք հասցրին բուրժուազիային:

Այսուհետև գալիս են շտրեյկբրեխերներին «կոպիտ վերաբերմունքից» պաշտպանելուն նվիրված կետերը: Զի թույլատրվում «արմիություններից հետա-

նել այն մարդկանց, վորոնք հրաժանվում են մասնակցել անորինական գործադուլին: Յեթն նրանք հեռացված են, պիտի նորից ընդունվեն: Նրանք կարող են հայց հարուցել իրենց վտարող արհմիությունների դեմ և վերջիններս պարտավոր են հատուցել նրանց փութներն այն գումարով, վոր դատարանն արդարացի հիմամարի»: Արգելվում են գործադուլային պիկետները (ոգնական շոկատներ), վորոնց նպատակը վորեւ մեկի աշխատելու խանգարելն է, այսինքն՝ փոստորեն արգելվում են բոլոր պիկետները, շտրեյկերիսիսների դեմ պայքարելու բոլոր որինական ձևերը: Շտրեյկերիսիսներին «վախեցնելու» համար, նույնիսկ յեթն դա հասարակ ծաղր լինի, վոստիկանությունը կարող է սուսգանել մինչև յերկու հարյուր սուրբի և բանտ նստեցնել մինչև 3 ամիս: Իսկ գործադուլային պիկետներին մասնակցողները կարող են դատարանով 3 տարվա բանտարկոթյան դատապարտվել: Ըստ «գաղաղությունների մասնակցելու» համար պատժող որենքի:

Նոր որենքով անուշադիր չի թողնվիլ նաև արհմիությունների «քաղաքական ֆոնդը»: Նոր կարգ է մտցվում, վորի համաձայն «քաղաքական մուծում» գանձվում է արհմիությունների միայն այն անդամներից, վորոնք գրավոր հայտնում են իրենց ցանկությունը վճարել այդ մուծումը: (մինչև այժմ հակառակ կարգ գոյություն ունի, պետք էր հրաժարվելու մասին հայտարարել, հակառակ դեպքում մուծումը գանձվում էր բոլորից): Բացի այդ, ամենախիստ կերպով, քրեական պատասխանատվության սպառնալիքի տակ, արգելվում է արհմիության այլ միջոցները «քաղաքական ֆոնդը» ուժեղացնելու համար ոգտագոր-

ծելը: Այսպիսով, պահպանողականների կառավարությունը մի հարվածով յերկու նապաստակ է սպառնում: Մեկ, վոր պահպանում է Բանվորական կուսակցության միջոցները (մասնավանդ այն միջոցները, վորոնք պիտի ծախվեն նրա նախընտրական կամպանիայի համար), մեկ ել՝ պետական հսկողություն է նշանակում արհմիությունների զբամական ֆոնդի վրա:

Վերջապես, նոր որենքի վերջին կետը պետական աստիճանավորներին ու տեղական ինքնավարություններին արգելում է մասնակցել արհմիություններին, վորոնք «կապված են վորեւ քաղաքական կուսակցության հետ»: Չնայած այս կետի չափազանց անորոշ փաթեզության, բոլորին պարզ է, վոր «վորեւ քաղաքական կուսակցություն» ասելով, բացառապես բանվորական կուսակցությունն է հասկացվում: Իսկապես, չէ՞ վոր պահպանողական կառավարության մտքովն էլ չի անցնի, վոր արգելի իր աստիճանավորներին՝ ոժանդակել պահպանողական կուսակցությանը: Պարզ է, վոր կառավարությունը ձգտում է իր ծառայողներին բուրժուազիայի և բուրժուական կառավարության խոնարհ ճորտերը դարձնել և անանցանիլի անդունդ ստեղծել աստիճանավորների (նույնիսկ ստորին) ու բանվոր դասակարգի միջև:

Այսպես է նոր որենքն արհմիությունների մասին: Նույնիսկ նրա բովանդակության համառոտությունից էլ պարզ է, վոր այդ որենքը բոլորովին վերացնում է 1906 թվի արդյունաբերական կոնֆլիկտի որենքը և բոլոր նախորդ ու հետագա այն որենքները, վորոնք կարգավորում են բանվորների միությունների իրավունքները և վոչ իրավադրկությունը, պաշտպա-

նում են կազմակերպված բանվորներին և վոչ շարեյկ-
բրեխերներին: Զուր չի, վոր անգլիացիները, վորոնք
սիրում են ամեն դեպքում հիշել իրենց պատմություն-
ներ, ասում են, վոր այդ որենքը նրանց յետ և տարել
100 տարով:

Յեվ իսկապես, այդ որենքը յերկար տարիներ
էմա, վորովես անգլիական պրովետարիատի խոշորա-
գույն պարտության հիշատակ: Ամենավատն այն է,
վոր այդ պարտությունը հետևանք էր վոչ այնքան
կապիտալիստների ուժի, վորքան կազմակերպված
բանվորների թուլության:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԱՅԻՈՆԱԼԱՑՈՒՄԸ ՅԵՎ „ՏՆՏԵ- ՍԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ“

1923 թվի պրովետարական հեղափոխության ան-
հաջողությունից հետո (հոկտեմբերյան որերին բուր-
ժուաները կարծում էյին, վոր հսոր վաղը կգա պրո-
լետարիատի ղեկաւարտւոյն) կապիտալիստներն իրենց
դրության լիակատար տեր զգացին: Յեվ նրանք ստի-
պեցին բանվորներին հարյուրապատիկը վճարել և՛
էրած սարսափների համար, և՛ պատերազմում պարտ-
վելու համար, չհաշիւելով դաուեսյան փոխառության
սովորները:

1925 թվի ճգնաժամը գերմանական կապիտա-
լիստների առաջ դրեց արդյունաբերության ապրիոնա-
լացման, նրա արտադրական ուժի բարձրացման և
արտադրանքի կամնացման պրոբլեմը:

Այս նպատակին կարելի չի հասնել յերկու ճա-
նապարհով:— արդյունաբերության տեխնիքական վերա-
հասնութման միջոցով, վորը խոշոր հիմնական ծախ-
սերի հետ և կապված և բանվորական ուժի շահագոր-
ծումը ծայրահեղ չափերի հասցնելով:

Գերմանական արդյունաբերողները գնացին և
այս և մյուս ճանապարհներով: Զի կարելի ժխտել,
վոր վերջին յերկու-յերեք տարվա ընթացքում գեր-

մանական արդյունաբերությունն զգալի չափով վերականգնվորվել և, արտադրության հսկայական կենտրոնացումն և տեղի ունեցել: Բայց ինքն այդ ռացիոնալացումն ու կենտրոնացումն ել կատարվում և ի հաշիվ քանակորդ ասակարգի: Ամեն անգամ, հենց վոր անջատ անջատ ձեռնարկությունները միանում են մի ուժեղ կենտրոնի կամ տրեստի մեջ, փակվում են ավելի մանր ու թույլ ձեռնարկությունները: Դրա հետևանքով հարյուրավոր ու հազարավոր բանվորներ մեռնում են փողոցում:

Թանգարժեք կահավորություն ձեռք բերելը ապրի հատուցվում են վոչ միայն արտադրանքի ուժեղացման միջոցով, այլև աշխատավարձն իջեցնելու բանվորական որը յերկարացնելու և աշխատող բանվորներին աշխատանքի լարվածությունը ծայր աստիճանի հասցնելու միջոցով:

Ընդհանուր առմամբ պնդում են, վոր գերմանական ռացիոնալացումը միայն 150/0-ով և կատարվում տեխնիքական կատարելագործումների հաշվին, իսկ մնացած 850/0-ը կատարվում և ի հաշիվ աշխատանքի լարվածության բարձրացման:

Աշխատանքի լարվածության բարձրացումն ամենինն բանվորական որվա կրճատում չի առաջացնում: Ընդհակառակը, գերմանական կապիտալիստները շարունակ աչքաթող անելով 8 ժամյա բանվորական որվա մասին յեղած որենքը և նույնիսկ ծանր արդյունաբերության վորոշ ձեռնարկներում, նույնիսկ Ռուսիա մոխահանքերում, ստորերկրյա աշխատանքներն արտավաճայի սխառնով հասցնելով 12 ժամի, 1926 թ-

և կարողացան ռաբխատադի միջոցով որենք անցկացնել 10-ժամյա բանվորական որվա մասին:

Արդյոք, պայքարում են գերմանական բանվորները՝ իրենց վոտնատակ տված իրավունքներին համար: Այս, պայքարում են, սակայն այդ պայքարը չափազանց անկադրակերպ և, բաժան-բաժան, դրա համար ել հաջողություն չի ունենում: Գերմանական արհմիությունների զլուխ կանգնած սոցիալ-դեմոկրատները բոլոր ուժերով աշխատում են թույլ չտալ, վոր այդ ընդդիմադրությունը համախմբվի, դառնա ամբողջ բանվոր դասակարգի կամ գոնե նրա մի զգալի մասի միասնական յիլույթը: Իսկ մասնակի գործադուլները, վորոնց նրանք խանգարել չեն կարող, հաջողություն չեն վերջացնում ևն «համաձայնողական խաղաղություն», վորտեղ զիջող կողմն անպատճառ բանվորներն ևն հանդիսանում:

Մինչդեռ սոցիալ-դեմոկրատները յերկու միլիոն մշտական գործադուրերներին և այն միլիոնավոր բանվորներին, վորոնք ժամանակից առաջ կորցրել են իրենց ուժն ու առողջությունն ի փառս կապիտալիստական ռացիոնալացման, հանգստացնում են այն դատարկարանությունը, թե այդ ամենը «տնտեսական գեմոկրատիայի» զարգացումն և հանդիսանում: «Իր հերթին տնտեսական գեմոկրատիան մի աստիճան և անհիվանդադին կերպով սոցիալիզմին հասնելու համար»:

Ըստ յերեույթին «տնտեսական գեմոկրատիան» պիտի կայանա նրանում, վոր բանվորներն իրենց «արտադրության պատասխանատու տարրը պիտի համարեն» և պիտի պահպանեն այդ արտադրությունը

Վորպես իրենցը, հրաժարվելով դործողուներից, աշխատավարձի պահանջից և այլն: Իսկ կապիտալիստները պիտի հնձեն բանվորների այդ խնդրանքներին և «խաղաղությամբ ընթանան դեպի սոցիալիզմ»:

Դժգուր և հասկանալի թե սա ինչով և տարբերվում ֆաշիստական «աշխատանքի քարտից»: Ինչպես յերևում է վոջնչով չի տարբերվում: Դործ ունենալով «բանվոր դասակարգի այդպիսի առաջնորդների հետ», գերմանական կապիտալիստները կարող են հանգիստ կերպով կիրառել արտադրության ուսցիոնալացումը: Այդ առաջնորդները կոգնեն նրանց:

Բայց գերմանական բանվորներին սկսում է ձանձրացնել բանվոր անասունի գերը և նրանք լրջորեն մտածում են իրենց անտեսական և քաղաքական կազմակերպություններում զեկավարությունը փոխելու մասին:

Յերբ գերմանական արհմիությունների գլուխ անցած կլինեն կոմունիստները, վերջ կտրվի բանվորներին «խաղաղությամբ» խեղդելուն: Զուր չե, վոր կոմկոսակցության գլխին են թափվում դատարանների, վոստիկանության, բացառիկ սրենքների և տյունի կարիճները:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԸ „ԴԵՊԲԵՐՏԻ ԱՌԱՋՆ ԱՌՆՈՒՄ ԵՆ“

1936 թիվը Ֆրանսիայի համար ևս բեկման տալիս է: Ծգնածամը մոտենում էր: Ֆրանսիական կապիտալիստներն ուզում են դիմավորել նրան սպառնալիքով և իրենց գերմանական կոլլեգաների նման ցանկանում են ոգտագործել այն իրենց տնտեսությունը ուսցիոնալացման յենթարկելու, ի հարկե, ի հաշիվ բանվոր դասակարգի:

Վորպեսզի այդ գործողությունը ըստ հնարավորին հաջողությամբ կատարվի, ամենից առաջ հարկավոր է ուժաթափ անել բանվոր դասակարգի հեղափոխական կազմակերպությունները: Դա Աշխատանքի Ունիտար Դերագույն Կոնֆեդերացիայի և կոմունիստական կոսակցություն զրա հարձակվելու պատճառներից մեկն էր: Աշխ. Ունիտար Կոնֆեդերացիան ֆրանսիական արհմիությունների հեղափոխական միավորումն է, վոր գանվում է կոմկոսակցության զեկավարության տակ:

Այստեղ տեղը չե խոսելու այդ հետապնդումների մյուս պատճառների մասին, վորոնք են իրենց գաղութային տիրապետությունների համար յերկյուղ կրելը, գայիք նոր պատերազմին պատրաստվելը:

Աշխատանքի Ունիտար Կոնֆեդերացիայի նախագահ Մոմոուսսոն նշած է. բանտում: Կոնֆեդերա-

ցիայի ականաւոր գործիչներից մի ամբողջ շարք յեն-
թարկվել և նրա վիճակին, Բայց վորովհետև ֆրան-
սիական որենքներով արհեստակցական միություննե-
րում, թեկուզ և նրա հեղափոխական կաղմակերպու-
թյուններում աշխատելը չի պատժվում, գրա համար
եւ Մոնմուսոյին և նրա ընկերներին ձեռք զցելու հա-
մար հենց առաջին աւիթի պոչից բռնեցին: Հիշեցին
նրանց հին «մեղքերը» — պայքարը Մարոկկոյի ալա-
զաէային պատերազմի դեմ: Այդ «գործով» նրանք դա-
տի արվեցին և դատապարտվեցին բանտարկության,
զանազան ժամկետներով:

Մի ամբողջ շարք կոմկուսակցութեան անդամներ
գեւմ պատրաստվում է լրտեսութեան մեջ մե-
ղադրելու մի պրոցես:

Զբաղականաւորով գրանով, ֆրանսիական բուր-
ժուազիան գենը և պատրաստել, վոր հարկավոր բոլե-
յին կանգնեք դնի ամբողջ բանվոր դասակարգի վրա:
Մենք խոսում ենք պրեկտիւտայան սրենքի մասին,
պաշտերազմի գեպքում ամբողջ ազգը զինակոչման յին-
թարկելու մասին: Զորակոչ հայտարարելու դեպքում
ամբողջ ազգը, հաշվելով նաև կանանց ու յերեխանե-
րին, համարվում և զինվորական ծառայութեան կոչ-
ված, բոլոր բանվորական կաղմակերպությունները պա-
տերազմայան շրջանի որենքի պատժի վտանգի տակ
պաթտավոր են ոգնություն ցույց առլ զինվորական
իշխանություններին: Սակայն կառուցվածքը փոքր-
լու պատրվակով նման «փորձնական» զորահավաքներ
կարող են լինել և խաղաղ ժամանակ, Յեւ շատ հավա-
նական և, վոր կապիտալիստների կառավարութեանը ք-
ղուք տեղը չի անի այդպիսի «փորձեր», այլ օրեր յե-

ղած գեպքերում, որինակ՝ վորև Լուրջ գործադուլի
ժամանակ:

Կարիք չկա խոսելու այն մասին, վոր այդ տոժա-
նակի որենքն անց և կացրված սոցիալ-իմպերիա-
լիստների ձեռքով, «սոցիալիստական» դատաւարութե-
րով-Բոնկուրի զեկուցմամբ: Յեւ այսպես, «որենված
Յրանսիան» ևս այնքան յետ չի մնում ֆաշիստական
Իտալիայից կամ պահպանողական Անգլիայից:

Մենք տեսնք, թե ինչ ձևերով և ընթանում
կապիտալի հարձակումը Յեւրոպայի կարևորագույն
կապիտալիստական յերկրներում:

Վոչ յեւրոպական յերկրներում դայմանները մի-
քիչ այլ են, բայց բանվոր դասակարգի դրությունն
ընդհանուր առմամբ ավելի լավ չե, քան Յեւրոպա-
յում: Նույն յեւրոպական իմպերիալիստները, իրենց
ամերիկյան և յապոնական կուլիգաների ոգնութեամբ,
միացյալ հարձակում են գործում հեղափոխական Զի-
նաստանի վրա: Զախջախելով չինական հեղափոխու-
թյունը՝ նրանք մտածում են հավիտենականացնել դա-
դութային պրոլետարիատի շահագործումը, ինչպես Զի-
նաստանում, այնպես եւ բոլոր մյուս դադութային և
կիսագաղութային յերկրներում:

Բանվոր դատակարգն առանց պայքարի անձա-
տուր չի լինում: Կապիտալի հարձակմանը դիմագրու-
թեան և պատրաստվում: Բայց յեթե այդ դիմագրու-
թեանը դեռևս համեմատաբար թույլ և, յեթե կապի-
տալը դեռևս հաղթում և ամբողջ գծի վրա, ապա այդ
բանում ամենից առաջ դավաճան «առաջնորդներն» են
մեղավոր:

Ղ և կ ա վ ա ր ու թ յ ա ն փ ո փ ո խ ու մ ն — այդ

և հապիաալիտական յերկրներէ բանվորներէ հերթա-
կան խնդիրը: Վորքան շուտ հատարվի այդ փոփոխու-
մը, այնքան շուտ ու վնասկան չենք պիտի ապրի տա-
վի հարձակումը տագնապալից նա-
հանջ կդառնա:

ԱՆԳՆՈՒՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՄԻՏԵՅԻ ՎԱԽՃԱՆԸ

Տրեգ-յունիոններէ եղենքուրդի կոնգրեսի վերո-
շումը՝ «չգումարել» անգլո-ուսական խորհրդակցական
կոմիտեն,—վերջ և դնում այս կոմիտեի պոյությանը,
վորն ստեղծված և արձմիռթյունների անգլո-ուսա-
կան 1925 թ. ապրիլի 6—8 կոնֆերանսի կողմից:

Տվյալ վերոշումն անսպասելի չէր բոլոր նրանց
համար, ովքեր հետևում էին արեգ-յունիոնների Գրե-
խավոր Խորհրդի աշխատանքին և անգլիական արհես-
տակցական շարժման մեջ վերջին յերկու տարիների
ընթացքում տեղի ունեցող դեպքերին: Գլխավոր Խոր-
հրդի աշխատանքն այս տարիների ընթացքում մի
նպատակի յեր ձգտում՝ անգլիական բուրժուազիայի
հետ խախտված «բարեկամական հարաբերություննե-
րը» վերականգնել:

Այս նպատակով Գլխավոր Խորհրդի ձեռք առած
միջոցներից ամենակարևորները հետևյալներն էին.—
1926 թվի մայիս—հոկտեմբերին նա դադարեց
ընդհանուր գործադուլին և հանքագործների շարժա-
նը: Նա «Լոյալ վերաբերմունք» ցույց
տվեց Բուլղոնի պահպանողական կառավարության
այն փորձին, վորով աշխատում էր նա միությունների
դեմ գրակոնյան որևէքներ հրատարակելով՝ ապահովել
իրեն անգլիական պրոլետարիատի ընդդեմ հապիտա-
լիզմի ունեցած այնպիսի վիթխարի յելույթից, վոր-

պիսին տեղի ունեցավ 1926 թվի մայիսի 4—13-ին և ձորն անախրնթաց ցնցումներ պատճառեց Անգլիայի ամբողջ եկեղեցիկային: Նա սա ր ո տ ա ժ արեց ԽՍՀՄ միությունների այն փորձերի վերաբերմամբ, վորոնցով աշխատում էին նրանք համաձայնիչ Գլխավոր Խորհրդի հետ, վորպեսզի միատեղ հանդես գան ընդդեմ չինական հեղափոխության վրա հարձակվելուն և ընդդեմ այն պատերազմի սպառնալիքի, վոր վրա յե հասնում Անգլիայի և ԽՍՀՄ ղեկավարող տական հարաբերությունների խզումից հետո:

Գլխավոր Խորհրդի այս քայլերը համարյա իրար էլին հաջորդում: Ու այդ բոլոր քայլերը Գլխավոր Խորհուրդը քողարկում էր, պահանջելով, վոր «սուսնեքը» հրաժարվեն իր գործողություններից քննադատելու իրաւունքից:

Այդ պահանջը Գլխավոր Խորհրդի ներկայացուցիչներն անգլո-ռուսական կոմիտեյում ձեռնարկեցին ղեկ ԱՌԿ Փարիզի նիստին 1926 թվին: Այդ ժամանակ Գլխավոր Խորհրդի ներկայացուցիչները քիչ էր մնում վիճեցնեյին ԱՌԿ աշխատանքները, նրանք հրաժարվում էին որակաւորի հարցերը քննել, մինչև վոր Համարձակութեւնը «յիս վերցնի» Անգլիայի և ԽՍՀՄ քանվորներին՝ ընդհանուր գործադուլի որերին Գլխավոր Խորհրդի վարմունքի առթիւ իր արած դիմումը, մինչև վոր հրաժարվի Գլխավոր Խորհրդի գործողություններն այդ որերին վորպես «ղափաճանություն» և «անձնատուրություն» վորակավորելուց: Յրումն այն ժամանակ կանխվեց միայն այն բանով, վոր վերջին բոլորէյին ԱՌԿ անգլիական անդամները նահանջեցին՝

ցրման հեռանկարներն ի նկատի ունենալով և նիստի շարունակությունը տեղափոխեցին Բերլին, ոգոտումին, ուր արդեն նրանք այլևս չբարձրացրին Համարձակութեւնի կոչի հարցը:

Քիչ ավելի մեղմացրած պահանջ — ըստ էյությունս սակայն փարիզյան պահանջներին հար և նման — նրանք առաջադրեցին հետևյալ, բերլինյան նիստին: Այստեղ նրանք փորձեցին ԱՌԿ կանոնադրություն մեջ մտցնել «նեքքին գործերին փոխադարձաբար չմիջամեխու մասին» կետը: Կանոնադրության մեջ այսպիսի «ուղղում» մտցնելով՝ Գլխավոր Խորհուրդը ձգտում էր Համարձակութեւնի գրկել անգլիական արհեստակցական շարժման առաջնորդների գործունեությունը խիստ քննադատելու հնարավորությունից և իրավունքից: Նա ձգտում էր Համարձակութեւն գրկել անգլո-ռուսական կոմիտեն վորպես ամբիոն ոգտագործելու հնարավորությունից, մի ամբիոն, վորից այդ խիստ քննադատությունը հեշտությամբ կհասներ անգլիական բանվորական մասսաներին: Համարձակութեւն ներկայացուցիչները վճռական դիմադրություն ցույց տվին կանոնադրության մեջ վորեկ փոփոխություն մտցնելուն վորի շնորհիւ այս անգամ որակաւորից հանվեց «փոխադարձաբար չմիջամեխու» հարցը: ԱՌԿ վորոշումով նախատեսվում էր միայն, վոր ԱՌԿ նիստի սկզբից առաջ որակաւորը կադմվում է յերկու պատգամավորությունների նախագահների և քարտուղարների միջև: Այսպեղած համաձայնությամբ: Ապա նախատեսվում էր, թե Համարձակութեւն, նախքան վորեկ քննադատություն հանդես գալը, բանակեցելու յե Գլխավոր Խորհրդի հետ վորոշ հարցի առթիւ և փորձելու յե համա-

ձայնեցնել իր ղերքը գլխավոր խորհրդի հետ: Դա ի հարկն Համարմխորհի կողմից վերջոյ ղիջում եր, մի ղիջում, վոր թելադրում եր ԱՌԿ պահպանելու անհրաժեշտությունը, այն ԱՌԿ, վորն հանդիսանում եր վորպես ֆորպոսաներից մեկը, վորոնցից ԽՍՀՄ պրոլետարական կազմակերպությունը կապիտալիստական կառավարությունների գլուխների վրայով կապ ե պահպանում Արևմուտքի բանվորական մասսաների հետ: ԽՍՀՄ-ի արհեստակցական միությունները հնարավորություն են ստանում բանվորական այդ մասսաների շուրջը ուժեր հավաքել՝ պատերազմի և ռեֆորմիստական շարժման դեմ պայքարելու համար: Բայց և այնպես «ներքին գործերին փոխադարձաբար չմիջամտելու» մասին վորոշումը ԱՌԿ չընդունեց, հակառակ Գլխավոր Խորհրդի բոլոր ջանքերին:

Սակայն Գլխավոր Խորհրդի տոաջնորդները, միանգամայն հնարավոր համարեցին ձեռնցնել, թե համարմխորհը խախտել և քննադատությունից հրաժարվելու մասին կնքված պայմանը: Յեւ այդ արեցին այնժամանակ, յերը նրանք պետք ե յենթարկվելին քննադատության իրենց նոր դավաճանությունների համար: Պայմանի խախտմանը վորպես ապացույց նրանք մատնանում եյին այն ինտերվյուն, վոր տվել եր ընկեր Տոմսկին արտասահմանյան ժուրնալիստներին: Այդ ինտերվյուի մեջ ընկ. Տոմսկին ուղղակի ու առանց այլեայլության ասում եր, վոր արմխորհներն որոնքի դեմ Գլխավոր Խորհուրդը վախկոտությամբ դուրս չեկավ: Նրա այդ վարմունքը կարելի չե վորակել դավաճանություն և անձնատուրություն անուններով:

Գլխավոր Խորհրդի հաստատու ու համառ ցանկությունը՝ Համարմխորհին զրկել իր գործողությունները քննադատելու իրավունքից, նպատակ ուներ, ինքնակե, վնչ այնքան ազատվել անհաճո մոմենտներից, ինչպիսին ապրիցին Գլխավոր Խորհրդի անդամները ընդհանուր գործադուլից հետո: Գլխավոր Խորհուրդը դրանով ավելի մեծ չափով ձգտում եր ի չիք դարձնել Համարմխորհի զրկած հարցերը, բանվորական մասսաների ուշադրությունը այդ հարցերից մի կողմ դրավելը:

Իրոք Համարմխորհը ԱՌԿ հետ իր ունեցած հարաբերությունների շրջանում հենվում եր այն համաձայնության վրա, վոր ձեռնադրեն կնքված եր Համարմխորհի և Գլխավոր Խորհրդի միջև 1925 թվի ապրիլի 6-8 կոնֆերանսում: Այդ համաձայնությունն այնուհետև հաստատված եր Գլխավոր Խորհրդի վճռով ե Սկաբրորոյի կոնգրեսի վորոշմամբ: Այդ համաձայնությունը չեւ սահմանափակվում «փոխադարձ պաշտպանման վորոշմամբ», մի վորոշում, վորի մեջ խոսվում եր միայն առկուսներ փոխանակելու, փոխադարձ իրազնկության և անգլո-ուսական կոմիտե կազմելու խնդիրների մասին: Փոխադարձ հարաբերությունների այդպիսի տեխնիկայի հետ միասին անգլո-ուսական կոնֆերանսը ընդունեց հաւ ծրագրային սկզբունք ույ ընույթ կրող վորոշումներ: Վերջիններս այնուհետև վավերացվեցին Գլխավոր Խորհրդի և Սկաբրորոյի կոնգրեսի կողմից: Բանաձևի մեջ արվում եր անգլո-ուսական կոմիտեյի պլատֆորման, վորը բաղկացած եր յերեք հիմնական կետերից. — 1. Միահաժուռ ուժերով պայքարել կապիտալի հարձակ-

ման դեմ, 2. Միահամուռ ուժերով պայքարել պատե-
լազմի սպառնալիքի դեմ, 3. Միահամուռ ուժերով ար-
հեստակցական շարժման միջազգային միասնականու-
թյան համար:

Կոնֆերանսի այս սկզբունքային վորոշումից յե-
լելով, վորն հենց պետք է ԱՌԿ աշխատանքի հիմքը
գառնար, Համարմխորհր խիստ ու արժանավայել
քննադատության եր յենթարկում Գլխավոր Խորհրդի
գործողությունները: Չէ՞ վոր վերջինս այս վորոշումնե-
րից վնչ մեկը չեր կատարում: Հոգուտ գործադույա-
վորներին Համարմխորհր կողմից ուղարկված դրամները
հրաժարվեց ընդունել Գլխավոր Խորհուրդը, պատճառ
քերելով այն վայել, թե յեթե ընդունի, այն ժամանակ
բուրժուական ինսամիները կպնդեն, իբր թե գոր-
ծադուր ռոուսական փողերով է առաջ տարվում: Այդ
հրաժարումն անգլո-ռուսական կոնֆերանսի վորոշում-
ների առաջին բացահայտ խախտումն էր, քանի վոր
կոնֆերանսը վորոշակի պնդում էր, թե կապիտալի
հարձակման դիմադրել միահամուռ ուժերով: Հանքա-
գործներին ոգնելու համար ԽՍՀՄ միություններին
հետ միասին հարկ չեղած միջոցները քննելուց հրա-
ժարվեց Գլխավոր Խորհուրդը: Դա նույն վորոշումը
խախտելու յերկրորդ ակտն էր: Գլխավոր Խորհուրդը
բուռն ձգտում էր ընդհանուր գործադուրը վիժեցնել և
Անգլիայի բոլոր կապիտալիստների ու պահպանողա-
կան կառավարության միացյալ ֆրոնտի դեմ հանքա-
գործների վարած պայքարը սուբոտափ յենթարկել:
Դա վկայում էր, վոր Գլխավոր Խորհուրդը չեր կատա-
րում նույն վորոշումը... Իսկ արհեստակցական միու-
թյունների որենքի վերաբերմամբ, այն որենքի, վորը

բանվորների ձեռքից խլում էր ամենատեղի միջոցը—
գործադուրի վերաբերմամբ ունեցած «լոյալությունը»,
մի «լոյալություն», վոր արտահայտվում էր ընդգեմ
որենքի առաջ յեկած շարժման գլուխն անցնել չցան-
կանալով, որենքը քննադատելիս «չափավորություն»
և «ճշտապահություն» յերևան բերելով,— այդ բոլորը
քրացնում էյին Գլխավոր Խորհրդի գաղաճանության
և անձնատուրության պատկերը: Այդպիսի տենդենցներ
ունենալով Գլխավոր Խորհուրդն ինքը ընակաւարբը
ձգտում էր ազատվել Համարմխորհր անցանկալի հա-
քեանությունից, վորը չեր կարող գաղաճանության
յուրաքանչյուր ակտին խիստ քննադատությամբ չվի-
բարերվել, բուրժուազիային ավելի և ավելի յենթարկ-
վելով: Գլխավոր Խորհրդի անդամները ավելի և ավելի
էյին նեղվում այն հարեանությունից և բազմիցս
պատրաստ էյին խզել իրենց հարաբերությունները
ԽՍՀՄ միությունների հետ. դրան խանգարում էր մի-
այն այն, վոր ԽՍՀՄ-ի բանվոր գասակարգի հետ սերտ
դաշինքը մեծ ժողովրդականություն էր վայելում անգ-
լիական բանվորական մասսաների շրջանում: Պետք
էր մի պատրվակ գտնել, վորը անգլիական բանվորի
աչքում արդարացներ կամ կարողանար արդարացնել
ԽՍՀՄ միությունների հետ հաբարեբությունը:
Նույնիսկ հարաբերությունների խզումից հետո՝
հեղափոխական լինելուց շատ հեռու «Նոր Առաջնորդ»
թերթը (որդան անկախ բանվորական կուսակցության,

վորի ղեկավարներին մեկը Մակդոնալդն և հանդիսա-
նում) գրում էր, թե քննադատության իրավունքը
յուրաքանչյուր միավորման անքակտելի սեփականու-
թյունն է, և վոր այդ պատճառով ել Գլխավոր Խորհուրդը
անարդարացի չե յերբ պահանջում է, մոր
Համարմխորհն հրաժարվի այս իրավունքից... Գլխա-
վոր Խորհուրդը պետք է ապացուցեր, վոր Համարմ-
խորհը իր քննադատությամբ ինչ վոր պարտավորու-
թյուններ է խախտում, վորով միայն հնարավոր կլի-
ներ արդարացնել խղումը: Այդ պատճառով նա այն-
քան համառ կերպով և դանաղան պատրվակներով ու
զանազան առիթներով ձգտում էր, վոր ԱՌԿ ընդունի
«փոխադարձարար չմիջամտելու» վորոշումը:

Բայց քննադատության իրավունքից Համարմ-
խորհը չհրաժարվեց և չեր ել կարող հրաժարվել, վո-
րովհետև հենց Գլխավոր Խորհրդի գործողությունների
քննադատության մեջ եր կոչանում ԱՌԿ գոյության
հիմնական խմատը, — այն բանից հետո, յերբ Գլխավոր
Խորհուրդը գործնականի մեջ ցույց տվեց իր սնան-
կությունը: Քննադատությունը կարող էր և պետք է
տաներ Գլխավոր Խորհրդին գեպի այնպիսի մի ուղի,
վորն տվելի համապատասխան լիներ դասակարգային
պայքարի շահերին: Քննադատությունը անգլիական
բանվորական մասսաներին հնարավորություն էր
տալիս, վոր նրանք Գլխավոր Խորհրդի արարքներն
ըստ արժանության գնահատեն: Ահա ինչու Համարմխորհը
հրաժարվեց «չմիջամտելու» վորոշման իր համաձայ-
նությունը տալուց և միայն համաձայնվեց, վոր վիճակի
հարցերը նախապես քննարկվեն Գլխավոր Խորհրդի
հետ:

Այս պայմանին Համարմխորհը մի վերջին ան-
գամ ել համապատասխան վարվեց, յերբ Գլխավոր
Խորհուրդը նորից վորոշել էր շտաբկերբխերի գեր
խաղալ բանվոր դասակարգի վերաբերմամբ: Բոլորե-
նի կարինետը ԽՍՀՄ-ի հետ գիվանագիտական հարա-
բերությունները խզեց: Այս հանգամանքը պատերազ-
մի սպառնալիք առաջ բերեց: Այդպիսի սպառնալիքի
պայմաններում ԱՌԿ պետք է համաձայն «փոխադարձ
պաշտպանության մասին յեղած վորոշման» և ԱՌԿ
գործունեյության պլատֆորմ հանդիսացող բանաձևի
— քննարկելու այն միջոցները, վոր Գլխավոր Խորհուր-
դը և Համարմխորհը պետք է ձեռք առնեյին վրա
հասնող պատերազմի դեմ միահամուռ ուժերով գործե-
լու համար: Ճիշտ է Գլխավոր Խորհրդի գործիչները
իրենց «Չերմ գգացմունքները» ցուցադրեցին լիազոր
ներկայացուցչության այն աշխատակիցների վերաբեր-
մամբ, վորոնք Չեմբերլենից արդեն ստացել էին ի-
րենց անցագրերը: — Նրանք իրենց այս «Չերմ գգաց-
մունքներն» արտահայտեցին լիազոր-ներկայացուցչու-
թյուն այցելելով և պարլամենտի շենքում լիազոր-ներ-
կայացուցչության աշխատակիցներին հրաժեշտի ճաշ
տալով: Սակայն ընդունել, վոր լուր գրանով հենց ըս-
պառվեցին այն միջոցները, վոր պետք է Գլխավոր
Խորհուրդը ձեռք առներ, դա կարող էին անել միայն
միամիտ ցնորամիտները, ծայր աւտիճան հիմարները
և նրանք, վորոնք գիտակցաբար պատրաստ էին դա-
վաճանել բանվորության շահերին: Անհրաժեշտ էր բո-
լորովին այլ կարգի միջոցներ ձեռք առնել: Այդ մի-
ջոցների մշակումը ԱՌԿ անմիջական պարտականու-
թյունն էր: Բայց այդ պարտականությունը կատարե-

լու համար պետք էր, վոր ԱՌԿ գումարվեր... Մինչդեռ ամիսներէ ընթացքում Գլխավոր խորհուրդը ձգձգում էր ԱՌԿ գումարումը: Գլխավոր խորհրդի և Համարհման միջև այդ ժամանակաշրջանում տեղի ունեցած անվերջ գրադրութիւնը ցույց էր տալիս, վոր առաջինն այս անգամ՝ եւ սարսափի յի յենթարկում Անգլո-Ռուսական կոնֆերանսի վարդապետները: Համարհման խորհը նախազգուշացրեց Գլխավոր խորհրդին, վոր ինքը՝ հուլիսը կտրելով, թի Գլխավոր խորհուրդը կհատարի իր անմիջական պարտականութիւնն Անգլիայի և ՄԱԶՄ բանվորութեան հանդեպ—պատերազմի վրտանդը և դրա դեմ ձեռք առնելիք միջոցները քննարկելով՝ կհրապարակի ամբողջ գրադրութիւնը, վորպէսզի դրանով իր վրայից վերցնի անգործութեան մեղադրանքը: Գլխավոր խորհրդից ԱՌԿ գումարման վերաբերմամբ դրական պատասխան չառանալով, Համարհման խորհն ամբողջ գրադրութիւնը հրապարակեց:

Իսկ ինչ են անում Գլխավոր խորհրդի անդամները: Նրանք նորից Համարհման խորհի վերաբերմամբ առաջ են քաշում յովքը մահացու հանցանքների մեղադրանքը, վորոնք բոլորն եւ վերաբերում են միեւնոյն հին յերկն, թի Համարհման խորհը խախտել է Գլխավոր խորհրդի անդամներին քննադատական «անձեռնմխելիութեան» վարդապետը: Այսպիսով նորից Գլխավոր խորհուրդը փորձ արեց խուսափել իրեն անմիջականորեն առաջադրված հարցերից և զրազվել քննադատութեան իրավունքի և «փոխադարձաբար չմիջամտելու» դատարկ հարցի քննութեամբ... Յեւ նա նորից այդ արեց, վորպէսզի անգլիական բանվորական մասսայից թաղցնի իր իսկական դեմքը, դավաճան ու անձնա-

տուր դեմքը, վորպէսզի նրա ուշադրութիւնը մի կողմ դարձնի բանվոր պատակաւորի հիմնական խնդիրներէց և այս խնդիրները լուծելու իր անկարողութիւնից:

Գլխավոր խորհրդի անդամների ճիգերը, սակայն, վոչ վեքի չիյին կարող խաբել Գլխավոր խորհրդին ուղղված և քիչ կրճատված ձեռք Նդերլանդի կոնգրեսին հասցեագրված պատասխան-նամակում Համարհման խորհը լիակատար արժանավայելութեամբ և զսպմածութեամբ վերականգնեց իսկական հեռանկարները, մասնաշեղծ Գլխավոր խորհրդի հանցանքները և նրա այն փորձերի միանգամայն անհիմն լինելը, վորոնցով փորձում է նա վոչնչացնել այդ հանցանքների հետքերը՝ հիմնվելով Գլխավոր խորհրդի անդամների գործողութիւնների «չարամիտ քննադատութեան» վրա:

Այդ պատճառով Գլխավոր խորհուրդն իրենից կախված բոլոր միջոցները ձեռք առավ՝ խզումը նախապատրաստելու համար:

Մենք գիտենք այժմ, թի ինչպիսի համբերութեան և հնազանդութեան յերևան բերեց կոնգրեսը՝ քննադատութեան բուռն կրակին յենթարկվելով: Նրա վերջումից հետո ԱՌԿ գոյութեանը փաստորեն վերջ է տրվում: Գլխավոր խորհուրդը հասաւ նրա նպատակին: Այլևս չկա այն «անհարմար հարեանութիւնը», վորն այնքան շատ անհանգստութիւն էր պատճառում Գլխավոր խորհրդի «համբերատար» անդամներին: Այժմ այլևս նրանք կազատվին իրենց նախաձեռնութեամբ՝ Ամստերդամի Ինտերնացիոնալի կամբին հակառակ—միտանականութեան միջադպին կոնֆերանս հրավիրելու հոգից: Այդպիսի կոնֆերանս, բուռնաբերու հաստատ խոստում տվել էր, յի՛թե Ամստերդամը հրա-

Ժառվեր նման կոնֆերանս գումարելուց, — Գլխավոր
Խորհուրդը ԽՍՀՄ արհեստակցական միություններին
1925 թ. ապրիլի 6—8-ը:

Այդ խոստումը կրկնվեց Սկարբորոյի կոնֆերան-
սում 1925 թ. սեպտեմբերին ու նորից և նորից պըն-
գեցին Գլխավոր Խորհրդի ներկայացուցիչները ԱՌԿ
նիստում: Այժմ կարելի չի չվախենալ, թե Թոմասնե-
րի, Սիարինների, Հիքսների հետագա աշխատակցու-
թյունը Բուլդոյինների և Չեմբերլենների հետ խիստ
քննադատության կենթարկվեն ԱՌԿ նիստերում: Այժմ
կարելի չի յերկյուղ չկրել, թե ԽՍՀՄ արհեստակցական
միությունների ձայնը ԱՌԿ ամբիոնից կհասնի ան-
գլիական բանվորական մասսաներին: Կոնգրեսը վորո-
շել և այլևս ԱՌԿ չգումարել, մինչև վոր ուռաներն
«ուղղվեն» և հրաժարվեն իրենց ուղղակի իրենց ա-
նունով կոչելու վատ սովորությունից...

Բայց Անգլիայի և ԽՍՀՄ միությունների հարա-
բերությունների խզումը, վորն այնքան նման է դե-
վանագիտական հարաբերությունների խզմանը (նույ-
նիսկ այն խոստումով, թե հարաբերությունները կը
վերսկսվեն, յեթե «ուռաներն ուղղվեն», մի խոստում,
վոր տալիս են և Սիարինները և Բուլդոյինները), բո-
լորովին չէ նշանակում, թե ԽՍՀՄ և Անգլիայի բան-
վորական մասսաների հարաբերություններն ել են
խզվել:

Այդ խզումը ձեռնառու չի պահպանողական կա-
ռավարություն համար՝ ԽՍՀՄ վրա գինված հարձակում
նախապարտապետու գործում, ինչպես այդ մասին հի-
շեցրեց կոնգրեսին Կրեմլը, մի մարդ, վորը բոլորովին
կողմակից չէ ԱՌԿ և ԽՍՀՄ միություններին:

Այդ խզումը տեղի ունեցավ այնպես և այնպիսի
պայմաններում, վոր Անգլիայի բանվորական մասսա-
ները հեշտությամբ կհասկանան դրա պատճառները:
Նրանք անգլիական պրոլետարիատի և ԽՍՀՄ պրոլե-
տարիատի միացյալ ճակատի լուծման պատասխանա-
տվությունը կձգեն նրա իսկական հանցապարտների
վրա: Գլխավոր Խորհրդի առաջնորդներն այս ամբողջ
միջադեպի ընթացքում յերևան յեկան իրենց անհամ-
բույր մերկությունը: Նրանք խզեցին իրենց հա-
րաբերությունները ԽՍՀՄ միությունների հետ: Ու
նրանք այդ արին, վորովհետև Համարմխորհը ճշգրիտ
պահպանում եր այն համաձայնության պայմանները,
վորոնց հիման վրա ստեղծված եր ԱՌԿ, իսկ նրանք
խրենք չեյին ցանկանում կատարել այդ պայմանները
և յուրաքանչյուր քայլափոխում սաբոտաժի էյին
յենթարկում այս պայմանները: Եղենրուրդի կոնգրե-
սում Գլխավոր Խորհրդի անդամները նմանվում էյին
Ամստերդամի Խնաերնացիոնալի գործիչներին՝ Փարի-
զում: Յեվ դրանք, և՛ նրանք համաշխարհային արհես-
տակցական շարժման առջև յերևան յեկան իրենց ան-
համբույր մերկությունը: Կեղծ բարեպաշտական փար-
թամ գղեստների տուկ դուրս յեկավ, վոր քնավորվել
են ստոր ինտրիգաներ և դավաճաններ:

Դա կարող է միայն մի հետևանք ունենալ: «Ընտ-
րովի ու պատասխանատու ներկայացուցիչներին» այն
«աղդեցությունն ու հեղինակությունը», վորոնք իբր
թե իրախովում էյին Համարմխորհի քննադատու-
թյամբ, չեն կարող չանհայտանալ Գլխավոր Խորհրդի
անդամների այդպիսի ինքնամեղակացման
պայմաններում:

Այդ զգացվում եր նույնիսկ Եդենրուրդի կոնգրես-
տում: Այստեղ այնպիսի խոշոր պատգամավորություն-
ներ, ինչպես՝ յերկաթուղայինը, հանքագործներինը,
չնայած իրենց այսպես կոչված ամբողջական սպայա-
կան կազմին (կոնգրեսի պատգամավորներն արձմեռ-
թեմական պաշտոնյաներ են)՝ ստիպված ելին քվեաբ-
կության ժամանակ ձեռնպահ մնալ:

Իսկ հեռատես, կոմունիստներին վորեւ համա-
կրանք տածելու անընդունակ առաջնորդները, վորպի-
սին ե որինակ Կրիմպ, ստիպված ելին՝ բանվորական
մասսաների արամագրություններին տպավորության
տակ՝ հանդես գալ ընդդէմ խզման: Ասլա քանի
անգամ ավելի ուժեղ դա կղղացվի Եդենրուրդի կոնգ-
րեսի պատերից դուրս, յերբ բանվորական մասսան
սկսի Գլխավոր Խորհրդի անդամների «արգարացումնե-
րին» հակադրել ԽՍՀՄ միությունների ԱՌԿ վերաբեր-
մամբ ագնիվ պրոլետարական բացատրությունները:

Գլխավոր Խորհրդի հարաբերությունների խզումը
Համարձխորհի հետ, ԱՌԿ վախճանը, դա լոկ միայն
Համարձխորհի ե «իմպերիալիզմի կողմից անբարոյա-
կանացված ե իմպերիալիզմի կողմից կաշկանդված»
անգլիական արհեստակցական շարժման ղեկավար
կազմի հարաբերության խզումն ե, այն ղեկավար կազ-
մի, վորը հենց դրանով դադարում ե
արտահայտել բանվորական մասսա-
ն երի տրամադրում թյունը:


Բայց սա դեռ չե նշանակում, թե խզվել են ան-
գլիական միությունների բուն մասսայի ե ԽՍՀՄ միութ-
յունների հարաբերությունները: Մասսան ղիտե ե
զգում ե, վոր միակ յերկիրը, ուր պրոլետարական հա-

մերաշխությունը լոկ բաղցր խոսք չե, այլ գործնական-
իրականություն ե, ուր ընդունված բանաձեւը «հարմար
գեպքում» չե հայտարարվում թղթե կտոր, այլ մի վո-
րոշում ե, վորը, ինչ ել վոր լինի, կիրառվում ե կյան-
քում, դա—պրոլետարական ղեկատուութայի յերկիրն ե,
Խորհուրդների յերկիրն ե: Յեվ գիտենալով
այս՝ նա յերկշոտ համաձայնողական
առաջնորդներին վրայից կանցնի՝ վե-
րական դեւելու ԱՌԿ, վորպես Անգլիա-
յի յեվ ԽՍՀՄ հզոր արհեստակցական
շարժումների գործուն դաշինք:

Յ Ա Ն Կ

ԵԶ

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ.	3
ԳԼ. I. Բանվորական շարժումն Անգլիայում XIX-րդ դարում	7
ԳԼ. II. Բանվորական շարժումը Ֆրանսիայում XIX-րդ դարի առաջին յերեք քառորդում	23
ԳԼ. III. Գերմանիայի բանվորական շարժման սկզբնական շրջանը (մինչև 1870 թ.)	38
ԳԼ. IV. Յերկրորդ ինտերնացիոնալի ժամանակաշրջան	52
ԳԼ. V. Յերրորդ ինտերն. ժամանակաշրջան	68
«Ակա տրեդ-յունիոնների և 1927 թ. արդյունաբերության մասին»	80
Գերմանիա—Կապիտալիստական ուսյիտնալացումը և տնտեսական դեմոկրատիան	85
Ֆրանսիական կապիտալիստները «դեպքերի առաջն առնում են»	89
Անգլո-ուսասական կոմիտեյի վախճանը	93



ՀՀ Ազգային գրադարան



NL0205201

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.